


«Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի

2024 – 2033թթ-երի կառավարման պլանի

Ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվություն (լրամշակված տարբերակ)



ԵՐԵՎԱՆ - 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	2
ԱՄՓՈՓ ՆԱԽԱԲԱՆ	4
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	7
Բաժին 1. ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՏԱՌԱՃՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	8
1.1. Անտառտնտեսության տեղադրությունը.....	8
1.2. Տարածքի կազմավորումը	8
1.3. Անտառտնտեսության կառուցվածքը և փոփոխությունը	9
1.4. «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի սահմանները	19
1.5 Լեռնագրության, ռելիեֆի և հողերի բնութագրեր	20
1.6 Կլիմա	22
1.7 Բուսական և կենդանական աշխարհ	23
1.8. Զրագրություն	24
1.9 Անտառկառավարման պլանի այլընտրանքային տարբերակներ, այդ թվում գրոյական՝ անտառկառավարման պլանի չմշակման տարբերակ.....	26
1.10 Անտառի ներկա իրավիճակի վերլուծություն.....	26
1.11 Էկոլոգիական վիճակը.....	27
Բաժին 2. ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	30
2.1 Բնակչության բաշխվածությունը	31
2.2 Աշխատանքային միգրացիա.....	32
2.3 Սոցիալական ենթակառուցվածքների և ծառայությունների առկայությունը.....	32
2.4 Տրանսպորտային ծառայություններ	33
2.5 Այլ ենթակառուցվածքներ.....	33
2.6 Գյուղատնտեսություն	33
2.7 Անտառտնտեսության հարակից տարածքներում սոցիալ-տնտեսական հետազոտությունների իրականացում.....	34
2.8 Անտառամերձ բնակավայրերի բնափայտի կարիքների գնահատում.....	34
Բաժին 3. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	35
3.1 Ֆլորա.....	36
Անոթավոր բույսեր	36
3.2 Ֆաունա	38
Անողնաշարներ	39
Ձկներ	40
Սողուններ.....	40
Թռչուններ.....	41
Կաթնասուններ.....	42
Բաժին 4. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.....	44
4.1 Անտառչափագործման և փայտամշակման բնութագիրը.....	44
4.2 Բնափայտային անտառօգտագործում.....	44
4.2.1 Անտառվերականգնման հատումներ	45
4.2.2 Խնամքի հատումներ.....	47
4.2.3 Սանիտարական հատումներ.....	51
4.2.4 Այլ հատումներ.....	52
4.3 Ոչ բնափայտային անտառօգտագործում.....	54
Բաժին 5. ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	58
5.1 Ածխաթթու գազի կլանման ծառայության գնահատում	58
5.2 Մենդի տրամադրման ծառայության գնահատում	61
5.3 Էկոտուրիզմ.....	62

Բաժին 6. ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	68
6.1 Անտառաճեցման պիտանելիության դասակարգում	69
6.2 Անտառապատման և անտառվերականգնման եղանակներ	69
6.3 Անտառմշակույթների հիմնման ժամանակ նախատեսվող սխեմաները	70
6.4 Տնկանյութի աճեցում	77
6.5 Նախատեսվող միջոցառումների արդյունքում անտառային տարածքների արդյունավետության բարձրացում	78
Բաժին 7. ԱՆՏԱՌԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	83
7.1 Անտառպահպանության խնդիրներն ու պահաբաժինների առանձնացումը	83
7.2 Ճանապարհային ցանց	85
7.3 Պահպանություն անտառային հրդեհներից	86
Բաժին 8. ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	89
8.1 Անտառի և կենսաբազմազանության պահպանություն	89
8.2 Մոնիթորինգ և գիտական ուսումնասիրություններ	89
8.2.1 Մոնիթորինգի ծրագիր	90
8.2.2 Գիտական ուսումնասիրություններ	91
Հավելված 1. Կապանի անտառտնտեսության շրջակա բնակավայրերում իրականացված սցիալ-տնտեսական հետազոտությունների արդյունքների ամփոփ տեղեկատվություն	93
Հավելված 2 Քարտեզագրական մաս	99
Քարտեզ 1. Անտառտնտեսության տեղադրությունը	99
Քարտեզ 2. Անտառտնտեսության անտառպետությունները	100
Քարտեզ 3. Անտառտնտեսության ռելիեֆը	101
Քարտեզ 4. Անտառտնտեսության տարածքն՝ ըստ լանջի կողմնադրության	102
Քարտեզ 5. Անտառտնտեսության տարածքն՝ ըստ լանջերի թեքության	103
Քարտեզ 6. Անտառտնտեսության քառակուսային ցանցը	104
Քարտեզ 7. Անտառտնտեսության տարածքն ըստ պաշտպանական կատեգորիաների	105
Քարտեզ 8. Անտառտնտեսության տարածքն՝ ըստ գլխավոր ծառատեսակների	106
Քարտեզ 9. Անտառտնտեսության տարածքն՝ ըստ տարիքային խմբերի	107
Քարտեզ 10. Անտառտնտեսության տարածքն՝ ըստ բոնիտետային դասերի	108
Քարտեզ 11. Անտառտնտեսության տարածքն՝ ըստ ծառուտի լրիվության	109
Քարտեզ 12. Անտառտնտեսության տարածքն՝ ըստ հասակային դասերի	110
Քարտեզ 13. Անտառտնտեսության հարակից համայնքները	111
Քարտեզ 14. Անտառտնտեսության տարածքում հանդիպող կարմիրգրքային բույսերի	112
Քարտեզ 15. Անտառտնտեսության տարածքում հանդիպող կարմիրգրքային կենդանիների	113
Քարտեզ 16. Անտառտնտեսության տարածքում հանդիպող պտուղ-հատապտուղները	114
Քարտեզ 17. Անտառտնտեսության և հարակից տարածքների պատմամշակութային հուշարձանները	115
Քարտեզ 18. Անտառտնտեսության պահաբաժինները	116
Քարտեզ 19. Անտառտնտեսության և հարակից տարածքների ճանապարհային ցանցը	117
Քարտեզ 20. Անտառտնտեսության տարածքն՝ ըստ հրդեհավտանգության դասերի	118

ԱՄՓՈՓ ՆԱԽԱԲԱՆ

Կապանի անտառտնտեսության ներկայիս սահմաններում անտառշինական աշխատանքներ առաջին անգամ իրականացվել են 1939-40 թվականներին՝ Շիկահողի անտառպետության տարածքում: Հաջորդող անտառշինական աշխատանքները իրականացվել են 1948, 1958, 16968, 1978, 1989-90 թվականներին, իսկ վերջին անտառշինությունը 2007 թվականին:

ՀՀ ՇՄՆ Անտառային կոմիտեի (ներկայիս Էկոպարեկային ծառայություն) և «ԷՅՋ ԶԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ միջև 2023թ. մայիսի 19-ին կնքվել է N ՇՄՆԱԿ-ԲՄԱՇՁԲ-23/01-1 պայմանագիր՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառկառավարման պլանի պատրաստման վերաբերյալ:

Պայմանագրի համաձայն իրականացվել է.

- Կապանի նախկին անտառկառավարման պլանների գույքագրման և քարտեզագրական նյութերի ուսումնասիրություններ,

- կլիմայի, լանդշաֆտի, ռելիեֆի և անտառային հողերի տիպերի բնութագրում,

- անտառտնտեսության տարածքում գետերի քանակի և ձգվածության, ջրահավաք ավազանի, լճերի և գրունտային ջրերի մակարդակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,

- ծրագրի տարածքում բնակչության զբաղվածության, անտառանյութի տեղական սպառման շուկաների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,

- ոչ բնափայտային անտառային պաշարների օգտագործման ուսումնասիրություն,

- նախորդ անտառշինության պլանշետների, անտառծառուտային պլանների և քարտեզ սխեմաների ձեռք բերում և ուսումնասիրություն,

- ժամանակավոր օգտագործման հատկացված հողերի քարտեզագրական նյութերի ձեռք բերում և ուսումնասիրություն,

- անտառտնտեսության և հարակից հողօգտագործողների սահմանների վերաբերյալ իրավաբանական ձևակերպումների ուսումնասիրություն,

- անտառսերմնային տեղամասերի, պլանտացիաների և տնկարանային տնտեսության առկայության և վիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,

- հարակից համայնքների հետ անտառշինական և համայնքների կադաստրային քարտեզներում առկա անտառային հողատեսքերի անհամապատասխանությունների ճշտման աշխատանքներ:

- անտառգույքագրման մեթոդների և դաշտային գործողությունների ուսուցման նպատակով ծրագրի հիմնական և օժանդակ (տեխնիկական) անձնակազմի համար կազմակերպվել է գործնական ուսուցում:

Անտառի գույքագրման գործողություններն իրականացվել են երեք խմբերով, հիմնական կազմում ընդգրկված են նաև օգնականներ անտառտնտեսությունից:

Իրականացվել են նաև կենսաբազմազանության գույքագրման և գնահատման, բարձրարժեք բնապահպանական անտառների որոշման և սահմանազատման, ինչպես նաև էկոհամակարգային ծառայությունների գնահատման աշխատանքներ:

Դաշտային գույքագրման արդյունքները մշակվել են Forest Book համակարգչային ծրագրային ապահովմամբ:

Քարտեզագրական նյութերը մշակվել են օգտագործելով ArcGIS ծրագրային ապահովումը, որը հնարավորություն է ընձեռնել դաշտային գույքագրման նյութերի վրա ստեղծել բազմանպատակային ԱՏՀ տվյալների բազա, ինչի շնորհիվ էլ պատրաստվել են թեմատիկ քարտեզներ: Ստեղծված թվայնացված հատվածային քարտեզագրական բազան լրացվում է ինֆորմացիայով թեմատիկ քարտեզների համար հատվածների բնութագրերի հետ EXCEL-ի աղյուսակների կցման ճանապարհով, ընդ որում, թեմատիկ քարտեզներ հնարավոր է կազմել ցանկացած ցուցանիշի համար, որն առկա է Forest Book-ի անտառային հատվածային բնութագրերի բազայում:

Տվյալների քարտեզագրական բազան ունի հատվածային բնութագրեր, որոնք օգտագործվել են թեմատիկ քարտեզների կազմման համար:

Գույքագրման և անտառտնտեսության հարակից համայնքների վարչական սահմաններում անտառային հողերի կադաստրային քարտեզագրական նյութերի համադրությունն ի հայտ է բերել անտառային հողերի սահմանների և մակերեսների անհամապատասխանություններ, դրանք ճշտվել և քարտեզները համաձայնեցվել են համայնքների ու անտառտնտեսության հետ:

Համաձայն Հայաստանի անտառներում անտառշինության և անտառկառավարման պլանների պատրաստման հրահանգի (2005թ), սահմանված կարգով իրականացվել են տեխնիկական և անտառշինական խորհրդակցությունները:

Առաջին տեխնիկական խորհրդակցությունը կազմակերպվել է կապանի անտառտնտեսության տնօրենի կողմից 2023թ. մայիսի 30-ին անտառտնտեսության վարչական մասնաշենքում, քննարկվել են նախապատրաստական փուլի աշխատանքները, կայացվել են համապատասխան որոշումներ:

Անտառշինական առաջին խորհրդակցությունը կազմակերպվել է Անտառային կոմիտեի (ներկայիս էկոպարեկային ծառայություն) կողմից Կապան քաղաքի «Դարիստ» հյուրանոցային համալիրում 2023թ. հունիսի 15-ին: Քննարկվել են անտառկառավարման պլանի պատրաստման դաշտային փուլում իրականացվող գործողությունները, խնդիրները, անտառտնտեսության ու անտառշինական աշխատանքները իրականացնող կազմակերպության միջև համագործակցությունը և այլ հարցեր:

2023թ հուլիսի 10-ին Կապան քաղաքի «Լեռնագործ» հյուրանոցային համալիրում անց է կացվել երկրորդ տեխնիկական խորհրդակցությունը, որի ընթացքում քննարկվել են անտառշինական դաշտային աշխատանքների կատարման արդյունքները, անտառների վիճակի և անտառտնտեսության վարման նախնական վերլուծությունը,

տեղամասերի ցանկը, որտեղ նշանակված են հիմնական անտառտնտեսական միջոցառումներ և այլ խնդիրներ:

Երկրորդ անտառշինական խորհրդակցությունը իրականացվել է անտառկառավարման ծրագրի հիմնական բաժինների մշակման ավարտից հետո՝ 2023թ.Նոյեմբերի 29-ին անտառտնտեսության վարչական մասնաշենքում: Քննարկվել են՝

- Անտառների և անտառային հողերի գնահատման հիմնական ցուցանիշները, առկա փոփոխությունների բնույթը և պատճառները նախորդ ժամանակաշրջանի համար,

- անտառային տնտեսության վարման վերլուծության արդյունքները,

- անտառօգտագործման ծավալները, վայրը, իրականացման եղանակները և մեթոդները, հատումների տնտեսական, անտառագիտական և բնապահպանական հիմնավորումները,

- անտառօգտագործման և անտառվերականգնման միջոցառումների ծավալները,

- անտառսերմնային տնկարանային տնտեսության կազմակերպումը,

- անտառների հակահրդեհային և անտառպաշտպանական միջոցառումների ծրագիրը,

- կողմնարդյունքի (ոչ բնափայտային հումքի պաշարների) գնահատումը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվությունը մշակվել է «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ինչպես նաև ՀՀ կառավարության 21.12.2023 թվականի «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությունը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 2294-Ն որոշման շրջանակներին համապատասխան: Վերոհիշյալ իրավական փաստաթղթերի մեթոդաբանությունը սահմանում է ՌԷԳ-ի իրականացման փուլային տրամաբանություն, համաձայն որի ՌԷԳ-ը իրականացվում է ստորև թվարկված 3 փուլերով.

- 1) ՌԷԳ շրջանակի որոշում,
- 2) ՌԷԳ հաշվետվության կազմում,
- 3) ՌԷԳ արդյունքների հաշվի առնելը հիմնադրությամբ փաստաթղթում:

Համաձայն ՀՀ կառավարության 21.12.2023 թվականի «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությունը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 2294-Ն որոշման 1-ին հավելվածով սահմանված կարգի 2-րդ՝ «ՌԷԳ շրջանակի որոշման փուլը» բաժնի 5-րդ մասի 2)-րդ կետի, ՌԷԳ շրջանակի որոշման փուլում պետք է իրականացվի հանրային իրազեկում: Ակնկալվում է, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ը կշրջանառի սույն հաշվետվությունը բոլոր առնչվող շահագրգիռ կառույցների շրջանակներում և նախաձեռնողի հետ միասին կձեռնարկի հանրային իրազեկման գործընթաց: Շահագրգիռ կառույցների և հանրության կողմից ակնկալվող առաջարկությունների և դիրքորոշումների հիման վրա, ինչպես նաև հանրային իրազեկման արդյունքում ակնկալվող կարծիքները հաշվի առնելով, նախաձեռնողի կողմից կմեկնարկվի ՌԷԳ-ի 2-րդ փուլը՝ կկազմվի ՌԷԳ հաշվետվությունը և արդեն իսկ մեկնարկված փորձաքննության շրջանակներում կներկայացվի լիազոր մարմնին՝ շարունակելու փորձաքննական գործընթացը:

Բաժին 1. ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՏԱՌԱՃՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1.1. Անտառտնտեսության տեղադրությունը

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելքում՝ Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի վարչական սահմաններում: Անտառտնտեսության գրասենյակը գտնվում է Կապան քաղաքում, Երևանից 297 կմ հեռավորության վրա: Անտառտնտեսության տարածքի ձգվածությունը հյուսիսից հարավ 47 կմ է, արևելքից արևմուտք՝ 48 կմ:

Անտառտնտեսությունը հյուսիսում շուրջ 16 կմ սահմանակցում է Սյունիքի անտառտնտեսությանը, արևմուտքում՝ շուրջ 80 կմ երկարությամբ (առանց հաշվի առնելու սահմանների մանր կտրտվածությունը) Քաջարան խոշորացված համայնքի համայնքային հողերին, հարավից՝ ավելի քան 40 կմ Կապան խոշորացված համայնքի համայնքային հողերին և արևելքում մոտ 85 կմ գրեթե անընդհատ սահմանակցում է Ադրբեջանի հանրապետությանը: Անտառտնտեսությունն արևելքում և հարավում սահմանակից է նաև «Չանգեզուր» կենսոլորտային համալիրին («Չանգեզուր» արգելավայր, «Շիկահող» արգելոց)՝ ընդհանուր շուրջ 60 կմ (Քարտեզ 1):

1.2. Տարածքի կազմավորումը

Կապանի անտառտնտեսությունը կազմավորվել է 1947թ. Գորիսի, Արծվանիկի, Կապանի, Բարտազի և Մեղրիի անտառապետությունների բազայի վրա: Հայկական ՍՍՀ Գյուղատնտեսության նախարարի 12.04.1954թ. N327 հրամանով Կապանի անտառտնտեսությունից առանձնացվել են Գորիսի և Արծվանիկի անտառապետությունները, իսկ 1958թ. Բարտազի անտառապետությունը, որի բազայի վրա կազմավորվել է ներկայիս Շիկահողի պետարգելոցը:

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 19.12.1964թ. N 1014 որոշմամբ Կապանի անտառտնտեսությունից վերակազմավորվել է անտառարդտնտեսության 30200 հա ընդհանուր մակերեսով, որին միացվել է Շիկահողի անտառապետությունը արգելավայրի կարգավիճակով և կոլխոզային տնօրինման անտառներից 699 հա: Նույն որոշմամբ անտառտնտեսությունից առանձնացվել և ընդհանուր 18266 հա տարածքի վրա կազմավորվել է Մեղրիի անտառտնտեսությունը:

ՀՀ կառավարության 1991թ. հունիսի 24-ի թիվ 421 որոշմամբ կապանի նախկին տարածաշրջանի կոլխոզ-սովխոզային տնօրինության ընդհանուր թվով 20773 հեկտար անտառներ և թփուտներ միացվել են անտառտնտեսությանը, ընդ որում ներառվել են նաև Արծվանիկի անտառապետության մերձակա Տանձավերի, Դավիթ-Բեկի և Կաղնուտի նախկին սովխոզային տնօրինության անտառները:

1998թ. Շիկահողի անտառապետությունը դուրս է բերվել անտառտնտեսության կազմից և ընդգրկվել նոր կազմակերպվող բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգում:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի 27.07.2021թ. թիվ 01-09/193 գրության համաձայն, անտառների և անտառային հողերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, Կապանի անտառտնտեսության կառուցվածքում կատարվել է փոփոխություն. Սյունիքի (Գորիսի) անտառտնտեսության կազմից Արծվանիկի անտառապետությունը հանվել և ընդգրկվել է Կապանի անտառտնտեսության կազմում:

Ներկա անտառշինությամբ անտառտնտեսության ընդհանուր մակերեսը կազմում է 53422հա:

1.3. Անտառտնտեսության կառուցվածքը և փոփոխությունը

Անտառտնտեսության կազմում ընդգրկված են 6 անտառապետություններ, ընդ որում ամենափոքրը Արծվանիկի անտառապետությունն է 5372հա կամ ընդհանուր մակերեսի 10,1%-ը, մեծը՝ Դավիթ Բեկի անտառապետությունը, 14113,0հա (26,5%), իսկ անտառապետությունների միջին մակերեսը՝ 8903,7հա: Նախորդ՝ 2007թ. անտառշինությամբ հաշվառված ընդհանուր մակերեսն ավելացել է 14963հա-ով, որը բացատրվում է Արծվանիկի անտառապետության միացման, շրջակա բնակավայրերի կադաստրային քարտեզագրման անտառային հողերի տարածքների և GIS համակարգով մակերեսների ճշտման հանգամանքներով (Աղյուսակ 1, քարտեզ 2):

Աղյուսակ 1 Անտառտնտեսության կառուցվածքը

№	Անտառապետության անվանումը	1989		2007		2023թ	
		հա	%	հա	%	հա	%
1	Առաջաձորի	7346	24	6883	18	7436	13,9
2	Նորաշենիկի	-	-	2672	7	-	-
3	Սյունիքի	-	-	4465	11	9907	18,5
4	Դավիթ Բեկի	5387	17	10777	28	14113	26,5
5	Կապանի	7885	26	6015	16	9394	17,6
6	Ճակատենի	-	-	7647	20	7200	13,5
7	Արծվանիկի	-	-	-	-	5372	10,1
8	Շիկահողի	10330	33	-	-	-	-
Ընդամենը		30948	30948	38459	100	53422	100

Աղյուսակ 2 Կապանի անտառտնտեսության քառակուսիների համարակալման ամփոփ տեղեկագիր ըստ անտառապետությունների

Անտառապետության անվանումը	Քառակուսի համարը 2007թ.	Մակերեսը, հա	Քառակուսու համարը 2023թ.	Մակերեսը, հա	Տարբերությունը, հա	Բացատրություն
Առաջաձորի	1	99	1	128	29	Սահմանների ճշտման արդյունքում
	2	116	2	123	7	Սահմանների ճշտման արդյունքում
	3	165	3	154	-11	Սահմանների ճշտման արդյունքում
	4	204	4	202	-2	Սահմանների ճշտման արդյունքում

Անտառապետության անվանումը	Քառակուսու համարը 2007թ.	Մակերեսը, հա	Քառակուսու համարը 2023թ.	Մակերեսը, հա	Տարբերությունը, հա	Բացատրություն
	5	99	5	92	-7	Սահմանների ճշտման արդյունքում
	6	113	6	96	-17	Անտառապետությունների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	7	71	7	84	13	Սահմանների ճշտման արդյունքում
	8	170	8	171	1	Սահմանների ճշտման արդյունքում
	9	128	9	140	12	Սահմանների ճշտման արդյունքում
	10	139	10	298	159	Անտառապետությունների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	11	157	11	148	-9	Սահմանների ճշտման արդյունքում
	12	161	12	172	11	Սահմանների ճշտման արդյունքում
	13	174	13	188	14	Սահմանների ճշտման արդյունքում
	14	148	14	169	21	Սահմանների ճշտման արդյունքում
	15	97	15	92	-5	Սահմանների ճշտման արդյունքում
	16	137	16	187	50	Սահմանների ճշտման արդյունքում
	17	114	17	124	10	Սահմանների ճշտման արդյունքում
	18	84	18	75	-9	Սահմանների ճշտման արդյունքում
	19	125	19	131	6	Սահմանների ճշտման արդյունքում
	20	99	20	100	1	Սահմանների ճշտման արդյունքում
	21	105	21	122	17	Սահմանների ճշտման արդյունքում
	22	180	22	159	-21	Սահմանների ճշտման արդյունքում
	23	111	23	119	8	Սահմանների ճշտման արդյունքում
	24	155	24	170	15	Սահմանների ճշտման արդյունքում
	25	220	25	209	-11	Սահմանների ճշտման արդյունքում
	26	209	26	206	-3	Սահմանների ճշտման արդյունքում
	27	158	27	153	-5	Սահմանների ճշտման արդյունքում
	28	167	28	177	10	Սահմանների ճշտման արդյունքում
	29	123	29	127	4	Սահմանների ճշտման արդյունքում
	30	127	30	123	-4	Սահմանների ճշտման արդյունքում
	31	156	31	147	-9	Սահմանների ճշտման արդյունքում
	32	162	32	175	13	Սահմանների ճշտման արդյունքում
	33	142	33	139	-3	Սահմանների ճշտման արդյունքում
	34	91	34	83	-8	Սահմանների ճշտման արդյունքում
	35	124	35	157	33	Սահմանների ճշտման արդյունքում
	36	105	36	124	19	Սահմանների ճշտման արդյունքում
	37	170	37	172	2	Սահմանների ճշտման արդյունքում
	38	124			-124	Տեղափոխվել է Դավիթ Բեկի անոպետություն, ք94
	39	97	39	124	27	Սահմանների ճշտման արդյունքում
	40	178	40	182	4	Սահմանների ճշտման արդյունքում
	41	111			-111	Սյունիքի ք35
	42	16			-16	Սյունիքի ք36
	43	110	43	96	-14	Սահմանների ճշտման արդյունքում
	44	158	44	339	181	Անտառապետությունների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	45	119	45	95	-24	Սահմանների ճշտման արդյունքում

Անտառապետության անվանումը	Քառակուսու համարը 2007թ.	Մակերեսը, հա	Քառակուսու համարը 2023թ.	Մակերեսը, հա	Տարբերությունը, հա	Բացատրություն
	46	100	46	79	-21	Սահմանների ճշտման արդյունքում
	47	115	47	264	149	Սահմանների ճշտման արդյունքում
	48	174	48	210	36	Սահմանների ճշտման արդյունքում
	49	236	38	277	41	Սահմանների ճշտման արդյունքում
	50	157	42	249	92	Սահմանների ճշտման արդյունքում
	51	83	41	85	2	Սահմանների ճշտման արդյունքում
Ընդամենը		6883		7436	553	
Արծվանիկի	1	203	1	231	28	Սահմանների ճշտման արդյունքում
	2	173	2	198	25	Սահմանների ճշտման արդյունքում
	3	184	3	218	34	Սահմանների ճշտման արդյունքում
	4	120	4	132	12	Սահմանների ճշտման արդյունքում
	5	103	5	95	-8	Սահմանների ճշտման արդյունքում
	6	181	6	202	21	Անտառապետությունների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	7	189	7	182	-7	Սահմանների ճշտման արդյունքում
	8	73	8	133	60	Քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	9	184	9	171	-13	Քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	10	181	10	117	-64	Քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	11	110	11	53	-57	Քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	12	229	12	295	66	Քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	13	92	13	83	-9	Սահմանների ճշտման արդյունքում
	14	122	14	128	6	Սահմանների ճշտման արդյունքում
	15	128	15	149	21	Սահմանների ճշտման արդյունքում
	16	76	16	79	3	Սահմանների ճշտման արդյունքում
	17	99	17	84	-15	Սահմանների ճշտման արդյունքում
	18	119	18	119	0	-
	19	126	19	130	4	Սահմանների ճշտման արդյունքում
	20	159	20	192	33	Ներառվել է մինչև պետական սահման անտառաձածկը
	21	119	21	219	100	Քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	22	73	22	111	38	Սահմանների ճշտման արդյունքում
	23	93	23	158	65	Քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	24	147	24	185	38	Սահմանների ճշտման արդյունքում
	25	82	25	110	28	Սահմանների ճշտման արդյունքում
	26	126	26	126	0	Սահմանների ճշտման արդյունքում
	27	112	27	119	7	Սահմանների ճշտման արդյունքում
	28	133	28	299	166	Ներառվել է մինչև պետական սահման անտառաձածկը
	29	106	29	144	38	Անտառապետությունների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	30	114	30	110	-4	Սահմանների ճշտման արդյունքում
	31	146	31	156	10	Անտառապետությունների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	32	299	32	470	171	Ներառվել է մինչև պետական սահման անտառաձածկը
	33	29	33	47	18	Սահմանների ճշտման արդյունքում
		34	127	127	Կազմավորվել է Սյունիքի 15 և 27 քառակուսիների հիման վրա	

Անտառապետության անվանումը	Քառակուսու համարը 2007թ.	Մակերեսը, հա	Քառակուսու համարը 2023թ.	Մակերեսը, հա	Տարբերությունը, հա	Բացատրություն
Ընդհամենը	4430		5372	942		
Սյունիքի	1	94			-94	Տեղափոխվել է Առաջածորի անոպետություն: 6, 10 և 44-րդ քառակուսիներ
	2	102			-102	Տեղափոխվել է Առաջածորի անոպետություն: 6, 10 և 44-րդ քառակուսիներ
	3	63			-63	Տեղափոխվել է Առաջածորի անոպետություն: 6, 10 և 44-րդ քառակուսիներ
	4	66	29	131	65	Սահմանների ճշտման արդյունքում
	5	54			-54	Տեղափոխվել է Առաջածորի անոպետություն: 44 և 47-րդ քառակուսիներ
	6	95	1	105	10	Սահմանների ճշտման արդյունքում
	7	167	2	249	82	Սահմանների ճշտման արդյունքում
	8	88	30	100	12	Սահմանների ճշտման արդյունքում
	9	97	3	185	88	Քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	10	158	28	153	-5	Սահմանների ճշտման և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	11	101	31	85	-16	Քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	12	81	4	121	40	Սահմանների ճշտման արդյունքում
	13	128	5	106	-22	Սահմանների ճշտման արդյունքում
	14	224	27	260	36	Քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	15	47	7	46	-1	Մի մասը տեղափոխվել է Արծվանիկի անտառապետություն
	16	76	6	110	34	Սահմանների ճշտման արդյունքում
	17	116	26	215	99	Սահմանների ճշտման արդյունքում
	18	93	34	188	95	Սահմանների ճշտման արդյունքում
	19	89	25	221	132	Սահմանների ճշտման և պոչամբարի ընդարձակման արդյունքում
	20	149	8	416	267	Սահմանների ճշտման արդյունքում
	21	93	10	111	18	Սահմանների ճշտման արդյունքում
	22	87	9	162	75	Սահմանների ճշտման և պոչամբարի ընդարձակման արդյունքում
	23	120	32	135	15	Սահմանների ճշտման արդյունքում
	24	97	33	269	172	Սահմանների ճշտման արդյունքում
	25	110	35	330	220	Սահմանների ճշտման արդյունքում
	26	42	36	173	131	Անտառապետությունների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	27	35			-35	Տեղափոխվել է Արծվանիկի անտառապետություն, ք 34
		2672				Նախկին Նորաշենիկի անտառապետություն
	1	90	15	118	28	Անտառապետությունների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	2	140	16	170	30	Սահմանների ճշտման արդյունքում, գտնվել է պետական սահմանից դուրս
3	138	19	221	83	Սահմանների ճշտման արդյունքում	
4	123	17	97	-26	Սահմանների ճշտման արդյունքում	
5	113	20	124	11	Սահմանների ճշտման արդյունքում	
6	113	39	203	90	Սահմանների ճշտման և քառակուսու սահմանների	

Անտառապետության անվանումը	Քառակուսու համարը 2007թ.	Մակերեսը, հա	Քառակուսու համարը 2023թ.	Մակերեսը, հա	Տարբերությունը, հա	Բացատրություն
						վերանայման արդյունքում
	7	141	50	179	38	Սահմանների ճշտման և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	8	136	49	134	-2	Սահմանների ճշտման արդյունքում
	9	33	53	44	11	Սահմանների ճշտման արդյունքում
	10	155	59	178	23	Սահմանների ճշտման արդյունքում
	11	81	11	102	21	Սահմանների ճշտման արդյունքում
	12	95	13	181	86	Սահմանների ճշտման արդյունքում
	13	150	24	117	-33	Սահմանների ճշտման և պոչամբարի ընդարձակման արդյունքում
	14	77	12	100	23	Սահմանների ճշտման արդյունքում
	15	93	23	135	42	Սահմանների ճշտման արդյունքում
	16	75			-75	Տեղափոխվել է Արծվանիկի անտառապետություն, միացել է ք31- ին
	17	110	14	107	-3	Սահմանների ճշտման արդյունքում
	18	78	22	112	34	Սահմանների ճշտման արդյունքում
	19	173	21	77	-96	Սահմանների ճշտման և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	20	120	18	87	-33	Սահմանների ճշտման և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	21	91	43	94	3	Սահմանների ճշտման արդյունքում
	22	111	42	147	36	Սահմանների ճշտման արդյունքում
	23	81	41	89	8	Սահմանների ճշտման արդյունքում
	24	56	44	63	7	Սահմանների ճշտման արդյունքում
	25	78	46	82	4	Սահմանների ճշտման արդյունքում
	26	143	40	331	188	Սահմանների ճշտման և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	27	59	48	119	60	Սահմանների ճշտման և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	28	126	47	127	1	Սահմանների ճշտման արդյունքում
	29	82	45	89	7	Սահմանների ճշտման արդյունքում
	30	65	62	165	100	Սահմանների ճշտման արդյունքում
	31	133	61	281	148	Սահմանների ճշտման արդյունքում
	32	99	63	157	58	Սահմանների ճշտման արդյունքում
	33	66	38	224	158	Սահմանների ճշտման արդյունքում
	34	18	37	48	30	Սահմանների ճշտման արդյունքում
	35	29			-29	Ք26-ի հետ միասին վերակազմավորվել է ք26-ի
	36	54	51	291	237	Սահմանների ճշտման արդյունքում
	37	160	52	230	70	Սահմանների ճշտման արդյունքում
	38	197	54	176	-21	Սահմանների ճշտման արդյունքում
	39	104	58	234	130	Սահմանների ճշտման արդյունքում
	40	36	60	86	50	Սահմանների ճշտման արդյունքում
	41	181	57	220	39	Սահմանների ճշտման արդյունքում
	42	146	55	193	47	Սահմանների ճշտման արդյունքում
	43	116	56	104	-12	Սահմանների ճշտման արդյունքում

Անտառապետության անվանումը	Քառակուսու համարը 2007թ.	Մակերեսը, հա	Քառակուսու համարը 2023թ.	Մակերեսը, հա	Տարբերությունը, հա	Բացատրություն
Ընդամենը	4465		9907	5442		
Դավիթ Բեկի	1	144	1	87	-57	Ներառվել է միայն բնապահպանական անտառային հատվածը
	2	238	2	116	-122	Ներառվել է միայն բնապահպանական անտառային հատվածը
	3	130	3	148	18	Սահմանների ճշտման արդյունքում
	4	10	4	58	48	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	5	5	5	35	30	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	6	144	6	85	-59	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	7	177	7	196	19	Սահմանների ճշտման արդյունքում
	8	191	8	424	233	Սահմանների ճշտման արդյունքում
	9	66	9	215	149	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	10	181	10	167	-14	Սահմանների ճշտման արդյունքում
	11	178	11	224	46	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	12	109	12	185	76	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	13	142	13	169	27	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	14	83	14	238	155	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	15	31	15	154	123	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	16	88	16	179	91	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	17	94	17	106	12	Սահմանների ճշտման արդյունքում
	18	40	18	154	114	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	19	152	19	136	-16	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	20	24	20	93	69	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	21	102	21	81	-21	Սահմանների ճշտման արդյունքում
	22	117	22	91	-26	Սահմանների ճշտման արդյունքում
	23	125	23	171	46	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	24	113	24	115	2	Սահմանների ճշտման արդյունքում
	25	155	25	159	4	Սահմանների ճշտման արդյունքում
	26	126	26	153	27	Սահմանների ճշտման արդյունքում
	27	16	27	21	5	Սահմանների ճշտման արդյունքում
	28	114	28	147	33	Սահմանների ճշտման արդյունքում
	29	86	29	100	14	Սահմանների ճշտման արդյունքում
	30	116	30	106	-10	Սահմանների ճշտման արդյունքում

Անտառապետության անվանումը	Քառակուսու համարը 2007թ.	Մակերեսը, հա	Քառակուսու համարը 2023թ.	Մակերեսը, հա	Տարբերությունը, հա	Բացատրություն
	31	146	31	143	-3	Սահմանների ճշտման արդյունքում
	32	110	32	100	-10	Սահմանների ճշտման արդյունքում
	33	166	33	143	-23	Սահմանների ճշտման արդյունքում
	34	142	34	183	41	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	35	187	35	242	55	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	36	6	36	32	26	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	37	112	37	140	28	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	38	126	38	89	-37	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	39	150	39	185	35	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	40	97	40	112	15	Սահմանների ճշտման արդյունքում
	41	96	41	112	16	Սահմանների ճշտման արդյունքում
	42	105	42	174	69	Սահմանների ճշտման արդյունքում
	43	78	43	78	0	Սահմանների ճշտման արդյունքում
	44	52	44	41	-11	Սահմանների ճշտման արդյունքում
	45	101	45	98	-3	Սահմանների ճշտման արդյունքում
	46	85	46	120	35	Սահմանների ճշտման արդյունքում
	47	170	47	185	15	Սահմանների ճշտման արդյունքում
	48	61	48	91	30	Սահմանների ճշտման արդյունքում
	49	179	49	158	-21	Սահմանների ճշտման արդյունքում
	50	171	50	278	107	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	51	206	51	322	116	Սահմանների ճշտման արդյունքում
	52	170	52	86	-84	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	53	98	53	145	47	Սահմանների ճշտման արդյունքում
	54	74	54	74	0	Սահմանների ճշտման արդյունքում
	55	94	55	119	25	Սահմանների ճշտման արդյունքում
	56	72	56	65	-7	Սահմանների ճշտման արդյունքում
	57	127	57	161	34	Սահմանների ճշտման արդյունքում
	58	71	58	65	-6	Սահմանների ճշտման արդյունքում
	59	93	59	105	12	Սահմանների ճշտման արդյունքում
	60	61	60	175	114	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	61	145	61	119	-26	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	62	82	62	114	32	Սահմանների ճշտման արդյունքում
	63	71	63	296	225	Սահմանների ճշտման արդյունքում
	64	76	64	262	186	Սահմանների ճշտման արդյունքում
	65	44	65	222	178	Սահմանների ճշտման արդյունքում

Անտառապետության անվանումը	Քառակուսու համարը 2007թ.	Մակերեսը, հա	Քառակուսու համարը 2023թ.	Մակերեսը, հա	Տարբերությունը, հա	Բացատրություն
	66	86	66	205	119	Սահմանների ճշտման արդյունքում
	67	223	67	51	-172	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	68	137	68	201	64	Սահմանների ճշտման արդյունքում
	69	52	69	126	74	Սահմանների ճշտման արդյունքում
	70	153	70	404	251	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	71	251	71	309	58	Սահմանների ճշտման արդյունքում
	72	63	72	40	-23	Սահմանների ճշտման արդյունքում
	73	74	73	71	-3	Սահմանների ճշտման արդյունքում
	74	131	74	114	-17	Ներառել է 94-րդ քառակուսին և կրճատվել հանքավայրի ընդարձակման արդյունքում
	75	29	75	42	13	Սահմանների ճշտման արդյունքում
	76	224	76	280	56	Սահմանների ճշտման արդյունքում
	77	179	77	291	112	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	78	216	78	276	60	Սահմանների ճշտման արդյունքում
	79	97	79	152	55	Սահմանների ճշտման արդյունքում
	80	91	80	130	39	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	81	180	81	76	-104	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	82	137	82	203	66	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	83	86	83	154	68	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	84	50	84	140	90	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	85	170	85	118	-52	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	86	110	86	138	28	Սահմանների ճշտման արդյունքում
	87	109	87	143	34	Սահմանների ճշտման արդյունքում
	88	144	88	139	-5	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	89	139	89	166	27	Սահմանների ճշտման արդյունքում
	90	98	90	153	55	Սահմանների ճշտման արդյունքում
	91	85	91	134	49	Սահմանների ճշտման արդյունքում
	92	190	92	155	-35	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	93	133	93	201	68	Սահմանների ճշտման արդյունքում
	94	19			-19	Միավորվել է 74-րդ քառակուսուն
			94	154	154	Տեղափոխվել է Առաջաձորի անտառապետությունից, ք38
Ընդհանուր		10777		14113	3336	
Կապանի	1	187	1	181	-6	Սահմանների ճշտման արդյունքում
	2	197	2	200	3	Սահմանների ճշտման արդյունքում

Անտառապետության անվանումը	Քառակուսու համարը 2007թ.	Մակերեսը, հա	Քառակուսու համարը 2023թ.	Մակերեսը, հա	Տարբերությունը, հա	Բացատրություն
	3	135	3	165	30	Սահմանների ճշտման արդյունքում
	4	66	4	93	27	Սահմանների ճշտման, գտնվել է պետական սահմանից դուրս և ավելացվել է մինչև պետական սահման
	5	86	5	143	57	Սահմանների ճշտման, գտնվել է պետական սահմանից դուրս և ավելացվել է մինչև պետական սահման
	6	218	6	309	91	Սահմանների ճշտման արդյունքում
	7	213	7	327	114	Սահմանների ճշտման արդյունքում
	8	119	8	96	-23	Սահմանների ճշտման արդյունքում
	9	227	9	235	8	Սահմանների ճշտման արդյունքում
	10	225	10	135	-90	Սահմանների ճշտման արդյունքում
	11	114	11	124	10	Սահմանների ճշտման արդյունքում
	12	186	12	184	-2	Սահմանների ճշտման արդյունքում
	13	238	13	222	-16	Սահմանների ճշտման արդյունքում
	14	111	14	187	76	Սահմանների ճշտման արդյունքում
	15	222	15	224	2	Սահմանների ճշտման արդյունքում
	16	139	16	154	15	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	17	204	17	222	18	Սահմանների ճշտման արդյունքում
	18	152	18	259	107	Սահմանների ճշտման, գտնվել է պետական սահմանից դուրս և ավելացվել է մինչև պետական սահման
	19	89	19	202	113	Սահմանների ճշտման արդյունքում
	20	134	20	395	261	Սահմանների ճշտման արդյունքում
	21	131	21	212	81	Սահմանների ճշտման, գտնվել է պետական սահմանից դուրս և ավելացվել է մինչև պետական սահման
	22	148	22	100	-48	Սահմանների ճշտման, գտնվել է պետական սահմանից դուրս և ավելացվել է մինչև պետական սահման
	23	175	23	207	32	Սահմանների ճշտման, գտնվել է պետական սահմանից դուրս և ավելացվել է մինչև պետական սահման
	24	113	24	118	5	Սահմանների ճշտման արդյունքում
	25	160	25	185	25	Սահմանների ճշտման արդյունքում
	26	135	26	141	6	Սահմանների ճշտման արդյունքում
	27	154	27	159	5	Սահմանների ճշտման արդյունքում
	28	97	28	95	-2	Սահմանների ճշտման արդյունքում
	29	92	29	297	205	Սահմանների ճշտման արդյունքում
	30	136	30	169	33	Սահմանների ճշտման արդյունքում
	31	136	31	206	70	Սահմանների ճշտման արդյունքում
	32	290	32	404	114	Սահմանների ճշտման արդյունքում
	33	450	33	540	90	Սահմանների ճշտման, գտնվել է պետական սահմանից դուրս և ավելացվել է մինչև պետական սահման
	34	538	34	457	-81	Բաժանվել է 34 և 35-րդ քառակուսիների
			35	279	279	Կազմավորվել է 34-րդ քառակուսու բաժանումից
			36	155	155	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք1
			37	93	93	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք2
			38	122	122	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք3
			39	94	94	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք4

Անտառապետության անվանումը	Քառակուսու համարը 2007թ.	Մակերեսը, հա	Քառակուսու համարը 2023թ.	Մակերեսը, հա	Տարբերությունը, հա	Բացատրություն
			40	177	177	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք5
			41	117	117	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք12
			42	168	168	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք13
			43	166	166	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք15
			44	156	156	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք14
			45	150	150	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք11
			46	121	121	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք10
			47	107	107	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք9
			48	142	142	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք8
Ընդամենը	6015		9394	3379		
Ճակատենի	1	148			-148	Տեղափոխվել է Կապանի անտառապետություն, ք36
	2	115			-115	Տեղափոխվել է Կապանի անտառապետություն, ք37
	3	92			-92	Տեղափոխվել է Կապանի անտառապետություն, ք38
	4	96			-96	Տեղափոխվել է Կապանի անտառապետություն, ք39
	5	172			-172	Տեղափոխվել է Կապանի անտառապետություն, ք40
	6	224	11	247	23	Սահմանների ճշտման արդյունքում
	7	135	13	132	-3	Սահմանների ճշտման արդյունքում
	8	117			-117	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք48
	9	115			-115	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք47
	10	119			-119	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք46
	11	150			-150	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք45
	12	120			-120	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք41
	13	165			-165	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք42
	14	150			-150	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք44
	15	181			-181	Տեղափոխվել է Ճակատենի անտառապետությունից, ք43
	16	161	9	109	-52	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	17	107	8	67	-40	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	18	114	7	149	35	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	19	180	5	159	-21	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	20	133	6	148	15	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	21	116	4	97	-19	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	22	157	15	166	9	Սահմանների ճշտման արդյունքում
	23	52	16	105	53	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	24	161	21	166	5	Սահմանների ճշտման արդյունքում
	25	140	22	146	6	Սահմանների ճշտման արդյունքում
	26	119	1	124	5	Սահմանների ճշտման արդյունքում
	27	133	2	84	-49	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում

Անտառապետության անվանումը	Քառակուսու համարը 2007թ.	Մակերեսը, հա	Քառակուսու համարը 2023թ.	Մակերեսը, հա	Տարբերությունը, հա	Քաջատրոսություն
	28	198	12	246	48	Սահմանների ճշտման արդյունքում
	29	131	10	115	-16	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	30	66	3	156	90	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	31	42	19	137	95	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	32	15	14	35	20	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	33	105	17	172	67	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	34	268	18	302	34	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	35	166	25	208	42	Սահմանների ճշտման արդյունքում
	36	154	20	153	-1	Սահմանների ճշտման արդյունքում
	37	125	24	132	7	Սահմանների ճշտման արդյունքում
	38	39	36	108	69	Սահմանների ճշտման արդյունքում
	39	274	26	352	78	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	40	242	23	186	-56	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	41	115	27	247	132	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	42	188	28	254	66	Սահմանների ճշտման արդյունքում
	43	150	35	214	64	Սահմանների ճշտման արդյունքում
	44	125	37	141	16	Սահմանների ճշտման արդյունքում
	45	132	38	146	14	Սահմանների ճշտման արդյունքում
	46	144	34	178	34	Սահմանների ճշտման արդյունքում
	47	153	33	146	-7	Սահմանների ճշտման արդյունքում
	48	271	32	343	72	Սահմանների ճշտման արդյունքում
	49	371	31	459	88	Սահմանների ճշտման արդյունքում
	50	145	30	155	10	Սահմանների և քառակուսու սահմանների վերանայման արդյունքում
	51	102	39	174	72	Սահմանների ճշտման արդյունքում
	52	65	40	173	108	Սահմանների ճշտման արդյունքում
	53	74	41	101	27	Սահմանների ճշտման արդյունքում
	54	44	29	156	112	Սահմանների ճշտման արդյունքում
	55	72	42	112	40	Սահմանների ճշտման արդյունքում
Ընհանուր		7647		7200	-447	
Ամբողջը		42889		53422	10533	

1.4. «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի սահմանները

Անտառտնտեսության տարածքը գտնվում է Սյունիքի մարզի Կապան և Քաջարան խոշորացված համայնքների վարչական սահմաններում: Անտառտնտեսության ներքին

սահմանները զգալի փոփոխությունների են ենթարկվել՝ նախկին անտառչինության համեմատությամբ: Նախկին կոլխոզ-սովխոզային անտառները առանձին քառակուսիներով ներկայացնելու փոխարեն այժմ ներտնտեսական սահմանները որոշվել են ռելիեֆի առանձնահատկություններով, հաշվի առնելով նաև առկա ճանապարհային ցանցը, (ջրաբաժաններ, ձորակներ, գետակներ, լեռնալանջեր և այլն), որոնք բնության մեջ արտահայտիչ են և հանդիսանում են համեմատաբար կայուն սահմաններ: Ներտնտեսական բաժանումն իրականացվել է օգտագործելով երկրակապակցման համակարգեր, արբանակային պատկերներ և տեղագրական քարտեզներ՝ հաշվի առնելով դաշտային ուսումնասիրությունները և տնտեսության հետ քննարկումները:

1.5 **Լեռնագրության, ռելիեֆի և հողերի բնութագրեր**

«Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառները գտնվում են Հայաստանի հանրապետության հարավային անտառածածկ շրջանում և տեղաբաշխված են Փոքր Կովկաս լեռնահամակարգի Զանգեզուրի լեռնաշղթայից արևելք ձգվող Բարգուշատի և Մեղրիի լեռնաշղթաներից ճյուղավորվող լեռնաբազուկների լանջերին՝ Ողջի, Գեղի և մասամբ Ծավ գետերի ջրահավաք ավազաններում:

Անտառտնտեսության տարածքում ռելիեֆը բնութագրվում է խիստ կտրտվածությամբ և լանջերի դիրքադրության փոփոխությամբ, որտեղ գերակշռում են հյուսիսային դիրքադրության լանջերը (60,8%), սակայն, անկախ կողմնադրություններից, գերակշռող են 25° -ից բարձր թեքության լանջերը (63,4%): Մինչև 15° թեքությունների վրա գտնվում է ընդհանուր տարածքի ընդհամենը 8,6%-ը, իսկ 42,9%-ը՝ 35° և բարձր թեքությունների վրա (Քարտեզ 4;5): Ըստ ծագման առանձնացվում են կազմաբանական հետևյալ շրջանները՝

- Մինչև ԾՄ 1200 մ բարձրության ցածր ժայռոտ լեռների շրջան,
- խիստ մասնատված միջին լեռների ժայռոտ շրջան,
- մասնատված սարահերթերի շրջան՝ 1750 – 2250 ԾՄ բարձր,
- մասնատված խիստ կտրտված մեծ թեքության լեռների շրջան 2250-3250ԾՄԲ:

Ողջիի աջափնյա տարածքներն առավել անտառապատ են, սարահարթը նկատելի դարավանդային կառուցվածք ունի, դեպի Ողջի գետը սարահարթն իջնում է խիստ կտրտված և մեծ բարձրության ժայռերով:

Երկրաբանական տեսանկյունից Կապանի անտառտնտեսության տարածքը գոտևորող լեռներն ունեն տեկտոնական ծագում, լեռնաշղթաներն իրենց գագաթներով և լանջերով հիմնականում ժայռոտ են՝ բնորոշ Զանգեզուրի լեռնաշղթային:

Անտառտնտեսության տարածքները տեղաբաշխված են 600–2700 ԾՄ բարձրությունների վրա, ընդ որում մինչև 800մ բարձրության վրա գտնվում է 1010,4հա մակերես (ընդհանուր տարածքի 1,9%), 801–1200մ-ում՝ 12318,0հա (23,1%), 1201–1600մ-ում՝ 16615,8հա (31,0%), 1600–1800մ-ում՝ 6876,5հա (12,9%), 1801–2000մ-ում՝ 6666,8հա

(12,5%), 2001–2200մ-ում՝ 5665,4հա (10,6%) և 2200մ-ից բարձր 4269,1հա մակերես (8,0%):

Կապանի անտառտնտեսության տարածքի, և ընդհանրապես լեռնային ծագման հողերի կազմավորման պրոցեսում կարևոր դեր են խաղում տեղագրական պայմանները, որին համապատասխան հաճախակի փոփոխվում է հողերի ջրագրական ռեժիմը: Վերջինս իր ազդեցությունն է թողնում բուսականության տեսակային կազմի, էոզոլոն պրոցեսների ինտենսիվության և դրանից կախված՝ հողակազմավորման ընթացքի տարբերության, հողերի բազմազանության բնութագրի, նրանց զարգացման և քիմիական ու մեխանիկական կազմերի վրա:

Անտառտնտեսության տարածքում ռելիեֆը բնութագրվում է խիստ կտրտվածությամբ և լանջերի դիրքադրության փոփոխությամբ, որտեղ գերակշռում են հյուսիսային դիրքադրության լանջերը, որտեղ տեղաբաշխված են 28149,4հա անտառներ (ընդհանուր անտառածածկ մակերեսի 66,7%-ը), իսկ հարավային կողմնադրությունների լանջերին 14040,5հա (33,3%):

Կապանի անտառտնտեսության տարածքի և ընդհանրապես լեռնային ծագման հողերի կազմավորման պրոցեսում կարևոր դեր են խաղում տոպոգրաֆիական պայմանները, որին համապատասխան հաճախակի փոփոխվում է հողերի հիդրոլոգիական ռեժիմը: Վերջինս իր ազդեցությունն է թողնում բուսականության տեսակային կազմի, հողակազմավորման ընթացքի տարբերության, հողերի բազմազանության բնութագրի, նրանց զարգացման և ֆիզիկական ու մեխանիկական կազմի վրա:

Անտառչինության ընթացքում հողային հատուկ ուսումնասիրություններ չեն կատարվել և հողերի նկարագրման ժամանակ օգտվել ենք ՀՀ Գյուղատնտեսության նախարարության հողագիտության և ագրոքիմիայի գիտահետազոտական ինստիտուտի, Սյունիքի տարածաշրջանում կատարած հողագիտական ուսումնասիրություններից և Հանրապետության հողային քարտեզագրական նյութերից, համաձայն որոնց անտառտնտեսության տարածքում հողածածկը հիմնականում կազմված է գորշ հողերից, գերակշռում են դարչնագույն լեռնաանտառային հողատեսքերը՝ համապատասխան ենթատիպերով: Մեխանիկական կազմի տեսանկյունից առավելապես տարածված են կավային խառնուրդով հողերը:

Թույլ զարգացած հողատեսքերը առավելապես տարածված են Ողջի գետի վերին հատվածներում, իսկ ուժեղ կմախքային հողերը՝ հիմնականում արևմտյան դիրքադրությունների թեք լանջերում և որպես օրինաչափություն նման հողերում աճում են առավել քսերոֆիտային և ցածր բոնիտետային դասերի ծառուտները:

Հյուսիսային լանջերում միջին թեքության և միջին բոնիտետային ծառուտների տակ տարածված է դարչնագույն հողերի տիպը:

1.6 Կլիմա

Հայաստանի տարածքը աչքի է ընկնում բնակլիմայական պայմանների մեծ բազմազանությամբ: Համաձայն Հայաստանի ագրոկլիմայական տեղեկագրի՝ Հանրապետությունում առանձնացվում են 11 ագրոկլիմայական գոտիներ: Կապանի անտառտնտեսության տարածքը վերագրվում է մասամբ 1-ին և 6-րդ (չափավոր տաք գոտին ընդգրկում է ծովի մակերևույթից մինչև 900 մետր բարձրությունները) և հիմնականում 7-րդ և բարձր ագրոկլիմայական գոտիներին:

7-րդ բարեխառն խոնավ գոտին ընդգրկում է 1400-2000 ԾՄ բարձրությունները: Ձմեռը երկարատև է, կայուն նաժաճկույթով, գերիշխում է բարեխառն սառնամանիքային եղանակը, գարունը երկարատև է, սառը և խոնավ, ամառը բարեխառն տաք է, իսկ աշունը մեղմ է:

10-րդ գոտին ընդգրկում է ԾՄԲ 2000-2450մ բարձրությունները և հանդիսանում է երկրագործության վերին սահմանը: Ձմեռը խիստ է, երկարատև, խորը ձնածածկույթով, գարունը ցուրտ է, համեմատաբար երկարատև, ամառը և աշունը համեմատաբար կարճ են:

11-րդ գոտին գտնվում է ծովի մակերևույթից 2500մ բարձր, առանձնանում է խիստ կլիմայով և ընդգրկում է բարձր լեռնային ալպիական արոտավայրերը:

Ընդհանուր առմամբ նշված անտառածածկան շրջանի կլիմայական պայմանները համեմատաբար նպաստավոր են ոչ քիչ տեսակների ծառաթփային բուսականության աճեցման համար:

Վեգետացիոն ժամանակաշրջանն անտառտնտեսության ստորին շրջաններում սկսվում է փետրվարի վերջին տասնօրյակին, իսկ վերին շրջաններում՝ շուրջ մեկ ամիս անց:

Աշնանային առաջին ցրտահարություններն անտառտնտեսության վերին սահմաններում սկսվում են սեպտեմբերի երկրորդ տասնօրյակից, իսկ ստորին սահմաններում՝ նոյեմբերի առաջին տասնօրյակից: Գարնանային վերջին ցրտահարությունները դիտվում են միջև համապատասխանաբար մայիսի առաջին տասնօրյակ և մարտի երկրորդ տասնօրյակ:

Կայուն ձնածածկույթ անտառտնտեսության ստորին շրջաններում դիտվում է ձմեռների 50%-ից պակաս դեպքերում, իսկ վերին շրջաններում դեկտեմբերի սկզբից, և պահպանվում է մինչև մայիսի երկրորդ տասնօրյակը: Ձնածածկույթի հզորությունը վերին շրջաններում տասնօրյա մաքսիմումով կարող է հասնել 90-100սմ-ի:

Գրունտի սառեցման առավելագույն խորությունը անտառտնտեսության ստորին սահմանից դեպի վեր փոխվում է 5սմ-ից մինչև 30սմ:

Ամռանը գերակշռում են արևեյան և հարավ-արևեյան քամիները (60%), ձմռանը՝ արևեյանը (55%): Հուլիսին նվազագույն միջին արագությունը 2,4մ/վ է, հունվարին՝ 2,3մ/վ:

Օդի հարաբերական խոնավության տարեկան միջինը ըստ «Կապան» օդերևութաբանական կայանի 73% է, ամենացածրը հուլիսին 62%, ամենաբարձրը՝

հոկտեմբեր-նոյեմբերին՝ 78%, իսկ ամենատաք ամսվա միջին ամսական խոնավությունը ժամը 15-ին՝ 44%:

Ստորև ներկայացվում է «Կապան» օդերևութաբանական կայանից ստացված որոշակի օդերևութաբանական տվյալներ: Տվյալները երկարաժամկետ վերլուծությունների նպատակ չեն հետապնդում, այլ բերվում են վերջին տարիներին կլիմայական պատկերի մասին գաղափար կազմելու համար:

Աղյուսակ 3. Կլիմայական բնութագրերը ըստ Կապանի օդերևութաբանական կայանի տվյալների

Օդի դիտված առավելագույն ջերմաստիճանը (°C)												
ամիս	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
2021	22,7	22,5	20,7	31,0	33,6	36,0	38,5	36,2	38,0	-	-	11,8
2022	8,4	11,8	8,0	-	-	28,8	31,9	31,3	27,8	20,3	15,5	7,4
Օդի դիտված նվազագույն ջերմաստիճանը (°C)												
ամիս	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
2021	-11,8	-8,0	-10,4	2,6	4,0	14,4	15,2	14,0	6,0	-	-	-0,8
2022	-3,9	-0,8	0,2	-	-	18,1	19,0	17,4	14,5	9,5	4,3	-0,7
Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճան (°C)												
ամիս	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
2021	2,5	5,1	5,5	15,3	18,3	24,3	25,1	25,3	19,8	-	-	4,4
2022	1,3	5,0	3,8	-	-	22,3	24,5	24,6	20,7	15,3	8,9	2,4
Ամսական տեղումների քանակը (մմ)												
ամիս	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
2021	28,9	30,7	52,1	21,2	62,0	0	1,6	38,0	6,4	-	-	-

1.7 Բուսական և կենդանական աշխարհ

Կապանի անտառտնտեսության տարածքն աչքի է ընկնում խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականությամբ, ռելիեֆի խայտաբղետությամբ և դրան համապատասխան բուսական հարուստ կենսաբազմազանությամբ:

Բոխու գերակշռությամբ ծառուտները հիմնականում զբաղեցնում են լեռնալանջերի միջին բարձրության հատվածները

Համաձայն Լ. Բ. Մախատաձեի Կապանի տարածաշրջանի անտառները պատկանում են Ղարաբաղ-Չանգեզուրյան անտառածման շրջանին և իրենց կազմավորմամբ անցումային դիրք են գրավում Հյուսիսային Հայաստանի մեզոֆիլ և ծայր հարավային քսերոֆիլ անտառների միջև: Անտառային համակեցություններում բացարձակ գերակշռում են բոխի-կաղնուտային և կաղնի-բոխուտային համակեցությունները, որոնց կազմերում հիմնականում հանդիպում են թխկի, թեղի, հացի: Կաղնիներից հանդիպում են արևելյան կաղնի (*Quercus macranthere*), վրացական կաղնի (*Quercus iberica*) և տարածաշրջանի համար էնդեմիկ տեսակ կաղնի արաքսյանը (*Quercus araxina*):

Բոխու գերակշռությամբ ծառուտները հիմնականում զբաղեցնում են լեռնալանջերի միջին բարձրության հատվածները:

Անտառկազմող գլխավար ծառատեսակներն են՝ արևելյան և վրացական կաղնիները, բոխին, իսկ ուղեկցող՝ հացին, սրատերև ու դաշտային թխկիները և այլ տեսակներ, որոնք մասնակցում են կաղնու և բոխու ծառուտների կազմավորմանը, իսկ երբեմն էլ ձևավորում են միատարր կամ խառը ոչ մեծ ծառուտներ:

Ցածր լեռնային գոտում անտառային բուսականությունը հիմնականում ներկայացված է ցածրաբուն կաղնու ծառուտներով, որոնց կազմում զգալի մասնակցություն ունեն սրապտուղ և սովորական հացիները, վրացական և դաշտային թխկիները:

Թփերից ավելի հաճախ հանդիպում են շլորենի, սզնի, մասրենի, ցաքի, դրախտաձառ: Բացատնետում և անտառի ենթանտառում թփերից հանդիպում են ցախակեռաս, մասրենի, հոնի, գկոենի, կտտկենի, մոշի:

Մարզի անտառշրջանացման առանձնահատկություններից է հաճարենու ծառուտների բացակայությունը, անտառտնտեսության տարածքում այն հանդիպում է ընդհամենը 0,4 հեկտարում:

Անտառներում պահպանվել են երրորդային շրջանի ռելիկտային կենի և սոսի ծառատեսակները: Տարածքի անտառկազմող կարևոր տեսակներից է գիհին, որի գերակշռությամբ ծառուտների մակերեսը հազմում է 623հա տարածք:

Բավականին բազմազան և հարուստ է կենդանական աշխարհը, որին նպաստում է լեռնային խիստ կտրտված ռելիեֆը, աղբյուրների առատությունը և Արաքսի ավազանի մոտիկությունը:

Տարածքում գրանցված են երկկենցաղների 1, սողունների 4, թռչունների 84 և կաթնասունների 24 տեսակներ: Կենդանիներից տարածված են սիրիական արջը, վայրի խոզը, այծյամը, վայրի ոչխարը, քարայծր, գայլը, լուսանը, հովազը, աղվեսը, նապաստակը, սկյուռը, ոզնին, կզաքիսը: Հանդիպում է նաև անտառային կատու, թփուտային դաշտամուկ, պարսկական սկյուռ, խլուրդ: Նաև սողուններ, թռչուններ (աղավնի, միրհավ, բազե, ագռավ և այլն), միջատներ ու բզեզների բազմաթիվ տեսակներ:

Բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկությունը կենսաբազմազանության պահպանության բաժնում:

1.8. **Ջրագրություն**

Անտառտնտեսության տարածքը պատված է մանր գետակների ցանցով: Բոլոր գետերը և գետակներն ունեն լեռնային բնույթ, սնվում են անձրևների, ձնհալքի և աղբյուրների ջրերով: Դրանք իրենցից ներկայացնում են տիպիկ լեռնային, արագ հոսքով գետեր, որոնք պարունակում են մեծ քանակությամբ կոշտ հոսք: Գետերը ջրառատ չեն, սակայն գարնանը դառնում են սելավատար: Անտառտնտեսության տարածքում է հոսում համեմատաբար խոշոր Ողջի գետը և Վաչագան, Գեղի, Ծավ, և այլ մանր գետակներ:

Աղյուսակ 1: Գետերի և ջրամբարների բնութագիրը

№	Գետի անվանումը	Ուր է թափվում գետը	Ձգվածությունը, կմ	Լայնությունը, մ	Անկման արագությունը	Ոլորայնության գործակիցը	Ջրային տրանսպորտի համար պիտանելիությունը
1	Ողջի	Արաքս	82	20	0,2	0,2	ոչ պիտանի
2	Ծավ	Արաքս	28	10	0,2	0,4	ոչ պիտանի
3	Գեղի	Ողջի	24	7	0,3	0,5	ոչ պիտանի
4	Շիշկերտ	Ծավ	17	5	0,4	0,5	ոչ պիտանի
5	Շիկահող	Ծավ	21	5	0,3	0,4	ոչ պիտանի

1.9 Անտառկառավարման պլանի այլընտրանքային տարբերակներ, այդ թվում զրոյական՝ անտառկառավարման պլանի չմշակման տարբերակ

Համաձայն ՀՀ Անտառային օրենսգրքի, անտառաշինական նախագիծը (անտառակառավարման պլանը) անտառաշինության արդյունքում մշակված և անտառային տնտեսության վարման նպատակով հաստատված տեխնիկական փաստաթուղթ է:

Անտառկառավարման պլանները իրենցից ներկայացնում են որոշակի ժամկետայնությամբ (հիմնականում 10 տարվա ժամանակահատվածի համար) մշակվող ուղեցուցային փաստաթղթեր՝ համապատասխան գործողությունների և միջոցառումների ծրագրերով, որոնք միտված են անտառների կայուն կառավարմանը, պահպանությանն ու պաշտպանությանը:

Որպես անտառակառավարման պլանների այլընտրանքային տարբերակներ կարող են դիտարկվել անտառտնտեսությունների տարեկան աշխատանքային պլանները՝ հատկապես այն դեպքերում երբ տվյալ անտառտնտեսությունը չունի անտառկառավարման պլան կամ ավարտվել է տվյալ անտառկառավարման պլանի գործողության ժամանակահատվածը: Թեև տարեկան պլանները կարող են դիտարկվել որպես այլընտրանք, սակայն դրանք հատվածական են և չեն կարող ապահովել կայուն և շարունակական անտառկառավարման գործելակերպեր:

Սույն հիմնադրությային փաստաթղթի զրոյական տարբերակը անտառկառավարման պլանի բացակայությունն է կամ դրա մշակումը չնախաձեռնելը, ինչը սակայն չի դիտարկվել՝ նկատի ունենալով զրոյական տարբերակի դեպքում վերը ներկայացված անտառկառավարման գործողությունների կայուն և շարունակական կազմակերպման խաթարման հնարավոր ռիսկերը:

1.10 Անտառի ներկա իրավիճակի վերլուծություն

Անտառի վիճակի պատկերման նպատակով սովորաբար ընդունված է համեմատության մեջ ներկայացնել նախորդ և ներկա անտառաշինությունների անտառի գնահատման հիմնական ցուցանիշները, ինչպիսիք են՝ անտառածածկ մակերեսի և պաշարի փոփոխությունը գերակշռող ծառատեսակների և հասակային դասերի սահմաններում, անտառգնահատման ցուցանիշների փոփոխությունները, ինչպես նաև անտառգնահատման և անտառտնտեսության կառավարման վերաբերյալ առկա համապատասխան նյութերը: Անտառի վիճակի պատկերման նպատակով ներկայացվում է նաև դեռևս 1988 թվականին՝ խորհրդային շրջանում իրականացված անտառաշինության անտառգնահատման հիմնական ցուցանիշները; Ժամանակաշրջանը համարվում է անտառային տնտեսության կառավարման տեսանկյունից լավագույն ժամանակաշրջաններից մեկը, երբ ինքնակամ հատումները

գրեթե բացակայել են կամ անտառվերականգնման և այլ կարևոր միջոցառումների իրականացման համար նյութական միջոցների խնդիրներ չեն եղել: Այնուամենայնիվ ներկայացվում է անտառի գնահատման առանձին ցուցանիշների 1988-2007-2023 թվականների համեմատական տեղեկատվություն:

1988 թվականին անտառի միջին տարիքը եղել է 89, միջին բունիտետային դասը 3,8, միջին լրիվությունը՝ 0,55, 1 հեկտարի միջին պաշարը՝ 146խտմ³, անտառածածկի 1 հեկտարի միջին աճը՝ 1,64խտմ³: Նշված ցուցանիշները համապատասխանաբար հետևյալն են՝ 2007թ. 71, 4,3, 0,51, 95խտմ³, 1,34խտմ³ և 2023թ. 80, 4,3, 0,52, 107խտմ³, 1,34խտմ³: Ճառուտների միջին տարիքի 1988թվականի համեմատությամբ 2007թվականին 18 տարով նվազումը արդյունք է և 2000-ական թվականների սկզբի տարիներին իրականացված ծավալուն չհամակարգված հատումների հանգամանքով: Նույն հիմնավորումը նաև միջին լրիվության 0,04 միավորով նվազումը, ինչպես նաև անտառածածկի 1 հեկտարի միջին պաշարի նվազումը 51մ³:

Անտառածածկ մակերեսի երիտասարդ տարիքային խմբի (1-ին և 2-րդ հասակային դաս) ծառուտների ընդհանուր մակերեսը 1988թվականի անտառչինությամբ կազմել է ընդհանուր անտառածածկի ընդհամենը 1,5%-ը, իսկ 2007թվականին բարձրացել է մինչև 2,8%, ինրը արդյունք է 2000-ականների սկզբնական տարիներին իրականացված ծավալուն չհամակարգված հատումների հետևանքով 1-ին հասակային դասի ծառուտների առաջացման:

Անտառտնտեսությունում հիմնական անտառկազմող տեսակներն են խոշորատեղ կաղնու ընդհանուր մակերեսը 2007թ. համեմատությամբ ավելացել է 4605,9 հեկտարով, իսկ ընդհանուր պաշարը՝ 627161խտմ³-ով, բոխու գերակշռությամբ ծառուտների մակերեսը 2007թ. համեմատությամբ ավելացել է 2667,3 հեկտարով, ընդհանուր պաշարը 536717խտմ³-ով, կենու գերակշռությամբ մակերեսների ճշտման արդյունքում, մակերեսը ավելացել է 33,9 հեկտարով, սոճուտների մակերեսը նվազել է 7,7 հեկտարով: Անտառտնտեսության ընդհանուր անտառածածկը ավելացել է 7107,9 հեկտարով, ընդհանուր պաշարը՝ 1157058խտմ³-ով:

Վերը նշված ժամանակաշրջանում էական փոփոխությունների է ենթարկվել ծառուտի միջին կազմը՝ որոշակի նվազել է կաղնի և սոճի տեսակների մասնակցությունը ծառուտի միջին կազմում, այն է՝ 1990թ՝ 7,6կաղնի 1,0սոճի 0,5լորենի 0,5կեչի 0,2բոխի 0,1հացի 0,1թեղի տեսակների փոխարեն 2022թ ծառուտի միջին կազմը՝ 6,0կաղնի 1,1բոխի 0,6սոճի 0,5հացի 0,5կեչի 0,4լորենի 0,4թխկի 0,1թեղի 0,1կաղամախի 0,1ուռի ծառանման 0,1գիհի 0,1նշենի:

1.11 **Էկոլոգիական վիճակը**

Էկոլոգիական վիճակի կարգավորման և բարելավման նպատակով կարևորվում է բնափայտային անտառօգտագործման հիմնավորված նախագծումը և իրականացումը, ինչը կապահովի անտառների կայունությունը ու երկարաժամկետ կայուն

օգտագործումը: Փայտանյութի իրացման տարեկան միջին ծավալը կազմում է 2607խտմ³, նույն թվում սոճին 26,9խտմ³, ընդհանուր հատման ծավալի 1,03%-ը, իսկ մնացածը՝ կարծրատերևավորները: Անտառտնտեսությունում հետագա 10 տարիների ընթացքում փափկատերևավոր տեսակների հատում չի նախատեսվել: Փայտանյութի օգտագործման ինտենսիվությունը 1 հեկտար անտառածածկի հաշվով կազմում է սոճու մոտ 2,87մ³/հա, կարծրատերևավորների մոտ՝ 0,99մ³/հա (Աղյուսակ 5):

Աղյուսակ 5 Անտառօգտագործման էկոլոգիական ցուցանիշներ

№	Ցուցանիշ	Ասեղնատերե- վավորներ	Կարծրատերե- վավորներ	Փափկատերե- վավորներ	Ընդհա- մներ
1.	Նախատեսված հատման ընդհանուր պաշարը, խտմ ³	172	27741	-	27913
1.1	Խնամքի հատումներ, խտմ ³				12182
1.1.1	Նախատեսված հատման ընդհանուր ծավալի %-ում				43,5
1.2.	Սանիտարական հատումներ խտմ ³	172	4305		4477
1.2.1	Նախատեսված հատման ընդհանուր ծավալի %-ում				16,0
1.3	Անտառվերականգնման հատում		9804		9804
1.3.1	Նախատեսված հատման ընդհանուր ծավալի %-ում		35,1		35,1
1.4	Այլ հատումներ		1490		1490
1.4.1	Նախատեսված հատման ընդհանուր ծավալի %-ում				5,4
2.	Փայտանյութի իրացման տարեկան միջին ծավալը, խտմ ³	17	2774		2791
3.	Օգտագործման ինտենսիվությունը տվյալ տեսակների անտառածածկի 1 հեկտարի հաշվով մ ³ /հա	22,6	23,3	-	23,3

Կարևորվում է նաև կառավարման շրջանում հատումների և վերականգնման հիմնավորված հավասարակշռության պահպանումը (Աղյուսակ 6): Նախատեսվող հատումների ընդհանուր մակերեսը կազմում է 1196,2 հեկտար: Վերականգնման նախատեսվող ընդհանուր մակերեսը կազմում է ընդհանուր 1543,9հա, նույն թվում անտառմշակույթների հիմնմամբ՝ 33,2հա, որից ասեղնատերևավորները՝ 8,5հա, կարծրատերևավորները՝ 24,7հա: Նոսրուտներում և ցածր լրիվության ծառուտներում նախատեսվում է իրականացնել բնական վերածին օժանդակման միջոցառումներ, ընդհանուր 10,7 հա, իսկ ցանկապատման և պահպանության համապատասխան միջոցառումներով մատղաշի պահպանմամբ՝ 1500հա:

Աղյուսակ 6. Հատման և վերականգնման ծավալների հաշվեկշիռը

№	Ցուցանիշներ, հա	Մակերեսը հա	Ասեղնա- տերևավոր	Կարծրա- տերևավոր	Փափկա- տերևավոր
1	Հատման նախատեսված տարածքների մակերեսը, հա (10 տարվա)	1196,4			

№	Ցուցանիշներ, հա	Մակերեսը հա	Ասեղնա- տերևավոր	Կարծրա- տերևավոր	Փափկա- տերևավոր
2	Վերականգնման ենթակա տարածքներ				
2.1	Ոչ անտառածածկ հողերում, հա, այդ թվում	43,9	8,5	35,4	
2.1.1	Բացատ և պարապուտ	33,2	8,5	24,7	
2.1.2	Հատված և չվերականգնված տարածքներ, նոսրուտներ	10,7		10,7	
3	Նախատեսվում է վերականգնել	1543,9			
3.1	Անտառմշակույթներով	33,2	8,5	24,7	
3.2	Բնական վերածի օժանդակմամբ (1X1)մ հարթակների պատրաստում, կաղնի սերմերի հավելյալ ցանքսով	10,7		10,7	
3.3	Մատղաշի պահպանմամբ	1500	15	1970	15

Բաժին 2. ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Անտառտնտեսությանը որպես հարակից բնակավայրեր ընդունվել են անտառների 5կմ-ոց գոտում ընկած բնակավայրերը, որոնք ներառված են Կապան և Քաջարան խոշորացված համայնքների 54 բնակավայրեր (Աղյուսակ 7, Քարտեզ 13):

Աղյուսակ 7. Ընդհանուր տվյալներ բնակավայրերի վերաբերյալ

Համանքի անվանումը	Բնակավայրի անվանում	Հեռավորությունը մարզկենտրոնից կմ	Հեռավորությունը Երևանից կմ	Բարձրությունը ծովի մակարդակից մ	Բնակչության թիվը	Գազաֆիկացումը
Կապան	Կապան	0	320	750	39024	+
	Ագարակ	18	322	950	169	-
	Աղվանի	48	360	1800	47	-
	Աճանան	13	317	880	233	+
	Անտառաշատ	20	309	1300	120	-
	Առաջաձոր	20	330	1100	151	-
	Արծվանիկ	14	302	1140	708	-
	Բարգուշատ	10	306	820	63	-
	Գեղանուշ	6	322	1040	308	-
	Գոմարան	7	310	1040	54	-
	Դավիթբեկ	25	291	1100	813	-
	Դիցմայրի	6	315	840	72	-
	Եղեգ	27	306	1300	94	-
	Եղվարդ	23	327	1135	284	-
	Խդրանց	17	321	1030	64	-
	Խորձոր	8	308	750	16	-
	Ծավ	37	353	1080	318	-
	Կաղնուտ	23	313	1540	102	-
	Ձորաստան	22	3,26	1210	61	-
	Ճակատեն	12	328	1100	167	-
	Ներքին Խոտանան	25	329	1360	206	-
	Ներքին Հանդ	36	352	950	118	-
	Նորաշենիկ	18	322	1030	110	-
	Շիկահող	21	337	980	245	-
	Շիշկերտ	48	360	1800	50	-
	Շրվենանց	20	324	1100	71	-
	Չափնի	19	298	1040	89	-
	Սզնակ	6	306	760	122	-
	Սյունիք	6	310	720	764	այո
	Սրաշեն	25	341	1025	101	-
	Սևաքար	21	321	1100	167	-
	Վանեք	23	327	1240	66	-
	Վարդավանք	14	312	1120	118	-

Համանքի անվանումը	Բնակավայրի անվանում	Հեռավորությունը մարզկենտրոնից կմ	Հեռավորությունը Երևանից կմ	Բարձրությունը ծովի մակարդակից մ	Բնակչության թիվը	Գազաֆիկացումը
	Վերին Խոտանան	25	329	1360	205	-
	Տանձավեր	35	339	1600	178	-
	Տավրուս	25	329	1120	96	-
	Ուժանի	26	330	1120	100	-
	Օխտար	21	331	1070	89	-
	Ընդհամենը				53996	
Քաջարան	Քաջարան	26	345	1800	8233	այո
	Անդրկավան	13	333	1275	118	-
	Աջաբաջ	32	352	1980	11	-
	Բաբիկավան	23	343	1550	216	-
	Գեղավանք	20	340	1450	3	-
	Գեղի	27	347	1600	185	-
	Գետիշեն	43	363	1850	54	-
	Լեռնաձոր	21	341	1635	344	-
	Կաթնառատ	29	349	2230	16	-
	Կավճուս	17	337	1293	70	-
	Ձագիկավան	16	336	1320	76	-
	Նոր Աստղաբերդ	29	349	1650	44	-
	Փոխրուս	30	350	2110	16	-
	Քաջարանց	26	346	1970	217	-
	Քարուս	33	353	1940	10	-
	Ընդհամենը				9673	
Ամբողջը				63669		

Բնակավայրերը տարբերվում են և ծովի մակարդակից ունեցած բարձրությամբ՝ 720-2230մ, ինչն իր հետքն է թողնում գյուղատնտեսության մասնագիտացման վրա: Համեմատաբար ցածրադիր շրջաններում ավելի զարգացած է մանր եղջերավոր անասնապահությունն ու պտղաբուծությունը, վերին շրջաններում՝ խոշոր եղջերավոր անասնապահությունն ու հողագործությունը: Սեփական բնակելի տներին կից այգիներում մշակում են խնձորենի, տանձենի, բալենի, ընկուզենի, հաղարջենի և այլ պտղատու ծառեր ու թփեր:

2.1 Բնակչության բաշխվածությունը

Անտառտնտեսությանը հարակից բնակավայրերի բնակչության ընդհանուր թիվը 63669 մարդ, որից քաղաքային բնակչությունը՝ 47257 մարդ, իսկ գյուղականը 16412 մարդ:

Բնակավայրերի բնակչության որոշակի մասը ժամանակավոր կամ երկարաժամկետ բացակայողներ են: Բացակայողների մեծ մասը տղամարդիկ են,

որոնց գերակշռող մասը ավելի շատ հակված կլինի վերադառնալ իրենց համայնքներ՝ սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխության պարագայում:

2.2 Աշխատանքային միգրացիա

Երիտասարդ ընտանիքների շրջանում նկատվում է իրենց գյուղական բնակավայրերը լքելու միտում՝ պայմանավորված սահմանային իրավիճակով և ավելի լավ ապրելակերպի ապահովման ձգտումով: Վերջին տարիներին աճել է նաև աշխատանքային միգրացիայի ցուցանիշը, ինչն անհանգստացնող է, և պայմանավորված է մշտական եկամուտների թուլացմամբ՝ վառելիքի, պարարտանյութերի թանկացմամբ, ընդհանուր տնտեսական ակտիվացման թուլացմամբ, վատ ապրելակերպով և այլն: Ժամանակավոր կամ երկարաժամկետ բացակայողները հիմնականում տղամարդիկ են, որոնց գերակշռող մասը ավելի շատ հակված կլինի վերադառնալ իրենց համայնքներ՝ սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխության պարագայում:

Մարդկային ռեսուրսների զարգացման առումով մասնավորապես անհրաժեշտ է իրականացնել տեղեկացվածության և վստահության բարձրացման, կրթական և վերապատրաստման, լրացուցիչ շահագրգռվածության ստեղծման լայնածավալ միջոցառումներ:

2.3 Սոցիալական ենթակառուցվածքների և ծառայությունների առկայությունը

Հետազոտված բնակավայրերի մեծ մասում գործում են մանկապարտեզներ և նախակրթարաններ: Ոչ բոլոր բնակավայրերում են գործում ավագ կամ միջնակարգ դպրոցներ: Իրավիճակը դպրոցների մեծամասնությունում գոհացուցիչ չէ: Վերանորոգման կարիք ունեն ոչ քիչ դպրոցներ, նաև կահույքի, սպորտային և ուսուցողական նյութերի: Սպորտային ակումբներ և ենթակառուցվածքներ գյուղական բնակավայրերում դրեթե չկան՝ բացառությամբ դպրոցների մի մասի սպորտային դահլիճների: Համեմատաբար լավ է պատկերը քաղաքային բնակավայրում:

Առողջապահական ենթակառուցվածքների վիճակը բացառությամբ շատ փոքր բնակավայրերի վատ չէ. առկա են բուժկետեր, որոշներում նաև ամբուլատորիաներ, որտեղ վերապատրաստված բուժաշխատողները առաջին օգնության ծառայություններ են մատուցում բնակչությանը: Բարձրակարգ ու կլինիկական բժշկական ծառայություններն հասանելի են միայն քաղաքներում:

Գյուղական բնակավայրերի մշակութային կյանքը բարելավման լուրջ կարիք ունի: Մշակույթի և կամ կենցաղի տների շենքային պայմանները գրեթե ամենուր վատ վիճակում են, մշակութային իրադարձությունները եզակի են: Համեմատաբար վիճակը բավարար է քաղաներում, որտեղ մյուս բնակավայրերի համեմատ դիտվում է մշակութային աշխուժություն:

2.4 **Տրանսպորտային ծառայություններ**

Անտառտնտեսության հարակից բնակավայրերում հիմնականում գործում են տրանսպորտային ծառայություններ դեպի համայնքային կենտրոն, մարզկենտրոն և հարևան բնակավայրեր: Մարզկենտրոնից և մայրաքաղաքից դեպի անտառտնտեսությանը հարակից բնակավայրեր տանող ճանապարհների որակն ընդհանուր բավարար է, համայնքային և միջհամայնքային ճանապարհների մի մասը գրունտային է:

2.5 **Այլ ենթակառուցվածքներ**

Հետազոտված բնակավայրերից գազաֆիկացված են միայն քաղաքները: Հետազոտված բոլոր բնակավայրերը այս կամ այն չափով ապահովված են խմելու ջրի կանոնավոր մատակարարմամբ. որոշ տեղերում առկա են ջրամատակարարման խնդիրներ: Ջրի որակն ընդհանուր առմամբ բավարար է: Հետազոտված բնակավայրերի մեծ մասում առկա է թեև ոչ բավարար հաճախ իրականացվող աղբահեռացում: Միաժամանակ մտահոգիչ է աղբավայրերի առկայության և որպես աղբավայր օգտագործվող տարածքների վիճակը:

2.6 **Գյուղատնտեսություն**

Անտառտնտեսության հարակից համայնքներում գյուղատնտեսության վիճակը բավարար չէ՝ ոռոգվող հողատարածքների սակավություն, ֆիզիկապես և բարոյապես մաշված գյուղատնտեսական մեքենասարքավորումներ, հողագործության մեջ ներդրումներ անելու համար սկզբնական կապիտալի բացակայություն, գյուղմթերքի պահպանման ենթակառուցվածքների անբավարարություն և այլն: Բնակավայրերի մեծամասնությունում բանջար-բոստանային կուլտուրաների արտադրությունը հիմնականում ուղղված է տնտեսությունների սեփական կարիքների բավարարմանը և հիմնականում աճեցվում են ոռոգվող տնամերձ հողամասերում:

Համայնքներն ունեն անասնապահության զարգացման պոտենցիալ, որն առաջին հերթին պայմնավորված է բնակավայրերի մեծ մասում արոտավայրերի սզալի տարածքների առկայությամբ: Սակայն ոլորտում առկա են խնդիրներ, իմչպիսին են կենդանական ծագման արտադրանքի իրացման ոչ կայուն շուկան, հեռագնա արոտավայրերի ճանապարհների վատ վիճակը, դրանց մեծ մասի ոչ ջրարբիացված լինելը, բնակավայրերի մոտակա արոտավայրերի գերարածեցումը, պարբերաբար կրկնվող համաճարակները, ոչ քիչ արոտավայրերի սահմանամերձ լինելու հանգամանքը և այլն: Համայնքներում գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրների մեծ մասը պայմանավորված է գյուղատնտեսական ենթակառուցվածքների վատ վիճակով, դրանց մեծ մասը մնացել են դեռևս խորհրդային ժամանակներից: Դրանք ֆիզիկապես և բարոյապես մաշված են և չեն կարող նպաստավոր լինել արդյունավետ գյուղատնտեսության վարման տեսանկյունից: Գյուղատնտեսական մեքենասարքավորումները բնակավայրերում հիմնականում նորացման, արդիականացման կարիք ունեն:

2.7 Անտառտնտեսության հարակից տարածքներում սոցիալ-տնտեսական հետազոտությունների իրականացում

Հետազոտությունների իրականացման նպատակն էր գնահատել անտառային պաշարների ազդեցությունը և եկամուտների ստացման հնարավորությունները) և նշանակությունը տեղական կարիքների բավարարման տեսանկյունից:

Հետազոտությունները իրականացվել են 2010թ. «Անտառային օրենսդրության կիրարկման բարելավում եվրոպական հարևանության քաղաքականության արևելյան երկրներում և Ռուսաստանում» տարածաշրջանային ծրագրի (ENPI-FLEG) շրջանակում մշակված հարցաշարով՝ կատարված որոշակի փոփոխություններով(հավելված 1):

2.8 Անտառամերձ բնակավայրերի բնափայտի կարիքների գնահատում

Անտառտնտեսությանը հարակից 54 բնակավայրերը տեղաբաշխված են անտառտնտեսության անտառների 5կմ-ոց գոտում, ընդհանուր հաշվով Կապան և Քաջարան քաղաքներում բնակչության ընդհանուր թիվը մոտ 47257, իսկ 52 գյուղական բնակավայրերում՝ 16412: Ջեռուցման փայտի նվազագույն պահանջարկը ընդհանուր հաշվով գնահատվում է մոտ 54000մ³:

Դաշտային գույքագրման ընթացքում հաշվարկվել է նաև անտառտնտեսության անտառներում առկա բնական թափուկ բնափայտի պաշարը, (շուրջ 35000մ³) ընդ որում թափուկ բնափայտի քանակական և որակական գնահատման նկարագիրը հետևյալն է.

- 16800մ³ (48%) - 5 և ավել տարիների վաղեմությամբ, բնակավայրերից ու ճանապարհներից մեծ հեռավորությունների վրա և հիմնականում դժվարամատչելի տեղանքներում, մեծ մասի բնափայտը գտնվում են քայքայման փուլում, անհնար է արտահանել, կամ էլ արտահանման համար կպահանջվի տեխնիկական և նյութական մեծ ներդրումներ:

- 18200մ³ (52%) - տեխնիկական հատկությունները դեռևս պահպանած բնափայտն է, ցրված անտառտնտեսության ողջ տարածքում, 1 հեկտարում միջին 2-5մ³, հիմնականում մանր և միջին տրամագծի բնափայտի տեսքով, որից և օգտվում է ազգաբնակչությունը:

Յուրաքանչյուր տարում անտառտնտեսության անտառներում առաջացած բնական թափուկը, հիմնականում փոքր և միջին տրամագծերի տեսքով, կազմում է մոտ 17000մ³ (ընթացիկ աճի մոտ 30%-ը կամ անտառածածկի 1հա-ի հաշվով մոտ. 040մ³), որից համայնքների մոտակա տարածքների բնափայտը գրեթե ամբողջությամբ իրացվում է ազգաբնակչության կողմից ջեռուցման նպատակներով:

Բաժին 3. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը գտնվում է Կովկասի էկոտարածաշրջանում: Այն բարձր լեռնային երկիր է, որտեղ առանձնացվում են 5 լանդշաֆտային տիպեր՝ կիսաանապատային, տափաստանային, անտառային, ենթալպյան և ալպյան մարգագետնային:

Երկրի ոչ մեծ տարածքում (մոտ 30 հազ. քառ. կմ) աճում են շուրջ 3800 տեսակ անոթավոր բույսեր, 428 հողային և ջրային ջրիմուռներ, 399 մամուռներ, շուրջ 4500 տեսակի սնկեր, 464 տեսակ քարաքոսեր, բնակվում են 549 ողնաշարավոր և շուրջ 17200 տեսակ անողնաշար կենդանիներ: Հայաստանի կենսաբազմազանությունն աչքի է ընկնում բարձր էնդեմիզմով՝ մոտ 500 կենդանատեսակ (ֆաունայի շուրջ 3 %-ը) և 144 բուսատեսակ (ֆլորայի 3,8%-ը) համարվում են Հայաստանի էնդեմիկներ: Հայաստանի բույսերի Կարմիր գրքում ընդգրկված են 452 տեսակ, որը կազմում է ամբողջ ֆլորայի 11,89 %: Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված են 308 տեսակ՝ 155 անողնաշար և 153 ողնաշարավոր: Բարձրակարգ բույսերի խտությամբ Հայաստանն աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը՝ յուրաքանչյուր 1000 քառ. կմ տարածքում աճում է մոտ 107 տեսակ: Բույսերի մոտ 2000 տեսակ օժտված է սննդային, կերային, դեղատու, ներկատու, եթերայուղատու, մեղրատու, խեժատու հատկանիշներով, մի շարք կենդանիներ՝ մորթատու, մսատու և այլ հատկանիշներով:

35 արժեքավոր բուսատեսակներ իսպառ անհետացել են Հայաստանի տարածքից, իսկ այժմ անհետացման եզրին են գտնվում մի շարք բուսատեսակներ, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Հայաստանի տարածքն աչքի է ընկնում տեսակառաջացման ակտիվությամբ: Միայն վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանի տարածքում նկարագրվել է գիտության համար 50-ից ավելի նոր տեսակներ:

Հանդիսանալով մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ էկոլոգիական միջավայր, Հայաստանի կենսաբազմազանությունն ունի բնապահպանական կարևոր նշանակություն: Այն անհրաժեշտ գործոն է երկրի կլիմայի ձևավորման, ջերմային և ջրային ռեժիմների կարգավորման, օդը վտանգավոր գազերից և այլ նյութերից մաքրման, հողը էրոզիոն գործընթացներից պահպանման, շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ բարվոք վիճակի ապահովման համար: Հայաստանի բնակչության բարեկեցությունը և սոցիալական վիճակը սերտորեն կապված են կենսաբազմազանության պահպանության և կայուն կառավարման հետ, որը հանդիսանալով կենսունակ բնության և առողջ կյանքի դեռևս թերագնահատված երաշխիքը՝ գերակա դիրք պետք է գրավի երկրի մնայուն արժեքների շարքում: Այդ տեսակետից Հայաստանի հարուստ կենսաբազմազանությունը, ունենալով էկոհամակարգերի կայունությունն ապահովող բարձր հատկանիշներ՝ միաժամանակ հանդիսանում է երկրի տնտեսական զարգացման կարևոր նախապայմաններից մեկը: Կենսառեսուրսները հանդիսանում են երկրի տնտեսությանն աջակցող առանցքային

գործոն, հատկապես գյուղատնտեսության, սննդի և այլ ոլորտներին հումքի տրամադրման և ռեկրեացիայի զարգացման առումով:

Կապանի անտառտնտեսության տարածքը առանձնանում է կենսաբազմազանության բարձր պոտենցիալով, ինչին նպաստում է և՛ աշխարհագրական դիրքը, ռելիեֆն ու կլիման, և՛ «Չանգեզուր» կենսոլորտային համալիրին սահմանակցումը:

ՀՀ Կառավարության 19 դեկտեմբերի 2013 թվականի N 1465-Ն որոշմամբ ստեղծվեց «Չանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ, որը իրականացնում է պահպանության աշխատանքներ 79038.8հա բնության հատուկ պահպանվող տարածքներում՝

- «Շիկահող» պետական արգելոց» -12137,0հա
 - «Չանգեզուր» պետական արգելավայր» -25711,59հա
 - «Արևիկ ազգային պարկ» -31211,9 հա
 - «Սոսու պուրակ» պետական արգելավայր» -64,2 հա
 - «Խուստուփ» պետական արգելավայր» - 6946,74հա
 - «Բողաքար» պետական արգելավայր» - 2728,0հա
 - «Սև Լիճ» պետական արգելավայր» - 240,0հա
- (հիմք՝ ՀՀ կառավարության 2015 թվականի N731-Ն որոշում)

3.1 Ֆլորա

Անոթավոր բույսեր

Նկարագրություն

Կապան անտառտնտեսության տարածքում հանդիպում են անոթավոր բույսերին 101 ընտանիքի և 377 ցեղին պատկանող 898 տեսակ:

Կապանի անտառտնտեսության տարածքում աճող բույսերից 43 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (Աղյուսակ 8, քարտեզ 14): Այս տվյալները անհրաժեշտ են Կապանի անտառտնտեսության տարածքում բնապահպանական բարձրարժեք անտառների առանձնացման համար:

Աղյուսակ 8 Կապանի անտառտնտեսության տարածքում աճող ՀՀ Բույսերի Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ բուսատեսակները

№	Տեսակի լատիներեն անվանումը	Տեսակի հայերեն անվանումը	Կատեգորիան ըստ ՀՀ Կարմիր գրքի
1.	<i>Galanthus artjuschenkoae</i> Gabrielian	Չնձաղիկ Արտյուշենկոյի	VU
2.	<i>Bupleurum pauciradiatum</i> Fenzl	Եզնակող սակավաճաճանց	VU
3.	<i>Carum komarovii</i> Karjag.	Քեմոն Կոմորովի	CR
4.	<i>Centaurea elbrusensis</i> Boiss. et Buhse	Տերեփուկ էլբուրսյան	EN
5.	<i>Centaurea rhizocalathium</i> (K. Koch) Boiss.	Տերեփուկ արմատազամբյուղային	EN
6.	<i>Cousinia gabrieljanae</i> Takht. et Tamanjan	Խոզանափուշ Գաբրիելյանի	EN
7.	<i>Psephellus zangezuri</i> Sosn.	Պսեֆելիուս զանգեզուրի	EN
8.	<i>Tanacetum zangezuricum</i> Chandjan	Լվածաղիկ զանգեզուրի	EN
9.	<i>Tragopogon tuberosus</i> K. Koch	Սինձ պալարակիր	VU
10.	<i>Myosotis propingua</i> (Turcz.) Ledeb.	Անմոռուկ ցեղակից	EN

№	Տեսակի լատիներեն անվանումը	Տեսակի հայերեն անվանումը	Կատեգորիան ըստ ՀՀ Կարմիր գրքի
11.	Arabis laxa Sibth. et Smith	Արաբախոտ փխրուն	CR
12.	Thlaspi umbellatum Stev.	Շնկոտեմ հովանոցավոր	CR
13.	Campanula zangezura (Lipsky) Kolak. et Serdjuk.	Չանգակ զանգեզուրի	EN
14.	Coronaria coriacea (Moench.) Schischk. et Gorschk.	Կորոնարիա կաշվեկերպ	EN
15.	Sedum stoloniferum Gmel.	Թանթոնիկ ընձյուղակիր	VU
16.	Carex phyllostachys C.A.Mey.	Բոշխ տերևահասկային	VU
17.	Argyrolobium biebersteinii P.W.Ball	Արգիրոլոբիում Բիբերշտեյնի	EN
18.	Astragalus prilipkoanus Grossh.	Գազ Պրիլիակոյի	EN
19.	Coronilla cretica L.	Քարաովույտ կրետական	EN
20.	Lathyrus cassius Boiss.	Տափուրո կասիայի	EN
21.	Lathyrus setifolius L.	Տափուրո խոզանատերև	VU
22.	Lathyrus sylvestris L.	Տափուրո անտառային	EN
23.	Lens ervoides (Brign.) Grande	Ոսպ ոսապնյականման	VU
24.	Medicago arabica (L.) Huds.	Աովույտ արաբական	VU
25.	Trifolium angustifolium L.	Երեքնուկ նեղատերև	EN
26.	Vicia pisiformis L.	Վիկյուռ անման	CR
27.	Geranium albanum M. Bieb.	Խորդենի արևելակովկասյան	EN
28.	Iris lineolata (Trautv.) Grossh.	Հիրիկ նեղզային	EN
29.	Teucrium hyrcanicum L.	Լեդրախոտ հիրկանիական	VU
30.	Tulipa confusa Gabrieljan	Վարդակակաչ խճճված	EN
31.	Tulipa sosnovskyi Achverdov et Mirzoeva	Վարդակակաչ Սոսնովսկու	EN
32.	Ophioglossum vulgatum L.	Իժալեզու սովորական	CR
33.	Paeonia tenuifolia L.	Քաջվարդ նեղատերև	CR
34.	Platanus orientalis L.	Սոսի արևելյան	EN
35.	Ranunculus cicutarius Schlecht.	Գորտնուկ ցիկուտային	EN
36.	Ranunculus villosus DC.	Գորտնուկ մազոտ	CR
37.	Crataegus microphylla K. Koch	Սզնի փոքրատերև	EN
38.	Crataegus zangezura Pojark.	Սզնի զանգեզուրի	EN
39.	Pyrus gergerana Gladkova	Տանձենի հերիերի	EN
40.	Pyrus hyrcana Fed.	Տանձենի հիրկանյան	EN
41.	Pyrus raddeana Woronow	Տանձենի Ռադդեյի	EN
42.	Rubus takhtadjanii Mulk.	Մոշոնի Թախտաջյանի	EN
43.	Rubus zangezurus Mulk.	Մոշենի զանգեզուրի	EN
44.	Crataegus tournefortii Griseb	Ալոճ տուրնեֆորի	VU
45.	Astragalus divaricatus	Գազ չոված	EN
46.	Viola caucasica	Մանուշակ կովկասյան	CR
47.	Silene chustupica Nersesian	Ծվճվուկ խուստուփի	CR

Կապանի անտառտնտեսության տարածքը հարուստ է բազմաթիվ օգտակար բուսատեսակներով, որոնցից շատերը լայնորեն և վաղուց կիրառվում են մարդու կողմից: Ըստ նախնական տվյալների տարածքում լայն տարածում ունեն ուտելի և համեմունքային (148 տեսակ), մեղրատու (156), դեղատու (220), կերային (106) նշանակության տեսակները:

Հիմնական վրանգներ

Հիմնական վտանգներ շարունակում են մնալ ապօրինի հատումները, արածեցումը՝ հատկապես համայնքամերձ անտառներում անասունների անարգել մուտքը, բույսերի չհամակարգված հավաքը և արոտավայրերի ոչ ճիշտ կառավարումը:

Անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա ազդեցություն կարող է ունենալ կլիմայի փոփոխությունը՝ ջերմաստիճանի բարձրացման և խոնավության նվազման միտումները:

Էկոհամակարգերի համար սպառնալիք կարող է հանդիսանալ նաև ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տարածումը, օրինակ՝ *Ailanthus altissima*, *Acer negundo*, *Robinia pseudacacia*, *Silybum marianum* և այլն:

3.2 Ֆաունա

Կապանի անտառտնտեսության տարածքը ընդգրկված է Ողջի-Որոտանի անտառային տարածաշրջանի մեջ և աչքի է ընկնում խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականությամբ ու ռելիեֆի խայտաբղետությամբ, որն էլ բնորոշում է կենդանական աշխարհի հարուստ կենսաբազմազանությունը:

Կարևոր է այն հանգամանքը, որ անտառտնտեսության անմիջական հարևանությամբ գտնվող ԲՀՊՏ-ների խիտ ցանցը և այդ տարածքներում պահպանության հատուկ ռեժիմի կիսումը էլ ավելի են ուժեղացնում/մեծացնում մարդկային գործոնի/ճնշման ազդեցությունը անտառտնտեսության տարածքի վրա հարակից տարածքներում տեղակայված բնակավայրերի (գյուղամերձ տարածքներում) կողմից բնական ռեսուրսների օգտագործման ժամանակ:

Բավականին բազմազան ու հարուստ է տարածքի կենդանական աշխարհը, որին նպաստում է լանդշաֆտների բազմազանությունը, լեռնային խիստ կտրտված ռելիեֆը, ֆաունայի տարբեր տեսակների համար բնորոշ բիոտոպների/ապրելավայրերի (անտառային զանգվածներ, զառիթափ լանջեր, ժայռեր, քարացրոններ, քարանձավներ, բացատներ, թաքստոցներ) առկայությունը, աղբյուրների առատությունը, Արաքսի ավազանի մոտիկությունը:

Տարածքում գրանցված են երկկենցաղների 1, սողունների 4, թռչունների 84 և կաթնասունների 24 տեսակներ: Կենդանիներից տարածված են սիրիական արջը, վայրի խոզը, այծյամը, վայրի ոչխարը, քարայծր, գայլը, լուսանը, հովազը, աղվեսը, նապաստակը, սկյուռը, ոզնին, կզաքիսը: Հանդիպում է նաև անտառային կատու, թփուտային դաշտամուկ, պարսկական սկյուռ, խլուրդ: Նաև սողուններ, թռչուններ (աղավնի, միրհավ, բազե, ագռավ և այլն), միջատներ ու բզեզների բազմաթիվ տեսակներ (Քարտեզ 15):

Սյունիքի մարզի համար գրական աղբյուրներում նշված են անողնաշարավոր կենդանիների 1316 տեսակներ, այդ թվում՝ փափակամարմինների՝ 76, և միջատների 1240 տեսակ: Հարկ է նշել, որ մարզի համար բերված անողնաշարների զգալի մասը Հայաստանից հայտնի է միայն Մեղրիի տարածաշրջանից, որը, մի կողմից, ունի

առավել հարուստ ֆաունա, մյուս կողմից՝ պատմականորեն ավելի մեծ ուշադրության է արժանացել հետազոտողների կողմից:

Անողնաշարներ

Ներկայացվում է տվյալներ Կապանի անտառտնտեսության տարածքի անմիջական հարևանությամբ գտնվող առանձին ԲՀՊՏ-ների անողնաշարների ֆաունայի վերաբերյալ, այդ թվում՝ այդտեղից հայտնի հատուկ բնապահպանական նշանակություն ունեցող ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակներ, ինչպես նաև տարածքներում հանդիպող Հայաստանի էնդեմիկներ (որոշ դեպքերում հայտնի են Նախիջևանի հարակից տարածքներից):

Անտառտնտեսության և հարակից տարածքներում հայտնի է ընդհանուր առմամբ 574 անողնաշար կենդանիների տեսակ, այդ թվում՝ 57 տեսակի փափականարմիններ և 517 տեսակի միջատներ:

Այստեղ հանդիպում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված 9 տեսակի միջատներ և 3 տեսակի էնդեմիկ փափականարմիններ ու միջատների 15 էնդեմիկ տեսակ և ենթատեսակ (4-ը ընդգրկված են ՀՀ Կարմիր գրքում):

ՀՀ Կարմիր գիրքում ընդգրկված են՝ Հայկական ֆիտոդրիմադուզա – *Phytodrymadusa armeniaca* Ramme (էնդեմիկ տեսակ), Մորեխ հայկական – *Gomphocerus armeniacus* Uvarov (էնդեմիկ տեսակ), Ֆալետիի կողնջակեր ցայտագնայուկ – *Procerus scabrosus falettianus* Cavaz. (էնդեմիկ ենթատեսակ), Կապանյան երկարաբեղիկ – *Cortodera kaphanica* Danil. (էնդեմիկ տեսակ), Կաղնու մեծ երկարաբեղիկ – *Cerambyx cerdo* L., Ալպիական ռոզալիա – *Rosalia alpina* L., Ապոլոն – *Parnassius apollo kashtshenkoi* Shel., Մնեմոզինա կամ սև ապոլոն – *Parnassius mnemosyne rjabovi* Shel. (Պրոզերպինա իլիկաթիթեռ – *Proserpinus proserpina* Pall. (Ընդգրկված է Բեռնի Կոնվենցիայի Հավելված 2-ում):

Էնդեմիկներ՝ Խխունջ *Pupilla bipapullata* Akram., Խխունջ *Ena shushaensis* Kob., Խխունջ *Monochroma brunneum* Simr., Որդան *Phoenacoccus pimilus* Kur., Որդան *Peliococcus unispinus* Borchs. & Ter-Grig., Սրամնարմին բզեզ *Pronomaea araxicola* Reitt., Փղիկ *Apion zangezuristicus* Khnz.,

Տարածքում առկա է նաև Բեռնի կոնվենցիայի Բանաձև 6-ում նշված *Callimorpha* (*Euplagia*) *quadripunctaria* L. առջաթիթեռը:

Հայտնի է ընդհանուր առմամբ 136 անողնաշար կենդանիների տեսակ, այդ թվում՝ 14 տեսակի փափականարմիններ և 122՝ միջատներ: Առկա են ՀՀ Կարմիր գրքում գրանցված 3 տեսակի միջատներ, որոնցից մեկը էնդեմիկ է՝ Ֆալետիի կողնջակեր ցայտագնայուկ – *Procerus scabrosus falettianus* Cavaz. (էնդեմիկ ենթատեսակ), Մնեմոզինա կամ սև ապոլոն – *Parnassius mnemosyne rjabovi* Shel., Պրոզերպինա իլիկաթիթեռ – *Proserpinus proserpina* Pall.:

Ձկներ

Գետերում մշտապես հանդիպում է 5 ձկնատեսակ՝ կարմրախայտը (*Salmo trutta fario*), կուրի կողակը (*Capoeta capoeta*), կուրի բեղաձուկը (*Barbus lacerta cyri*), անդրկովկասյան սպիտակաձուկը (*Alburnus alburnus hohenackeri*), արևելյան տառեխիկը (*Alburnoides eichwaldii*):

Երկկենցաղներ

Երկկենցաղներից հանդիպում են լճագորտը (*Pelophilax ridibundus*), փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*), կանաչ դոդոշը (*Bufo variabilis*) և փոքրասիական ծառագորտը (*Hyla savignyi*):

Սողուններ

Սողունների ֆաունան ներկայացված է 27 տեսակներով (11 տեսակի մողեսներ, 13 տեսակի օձեր և 3 տեսակի կրիաներ): Հայաստանի Կարմիր գրքում գրանցված տեսակներից հանդիպում են երկարատու սցինկը (*Eumeces schneideri*(VU)), առաջավորասիական մարոյան (*Trachylepis septemtaeniata*)(VU), կովկասյան կատվածը (*Telescopus fallax*)(VU), անդրկովկասյան սահնօձը (*Zamenis hohenackeri*)(VU): ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում գրանցված տեսակներից են լեռնային քսերոֆիտ անտառներում և լեռնային տափաստանների քարքարոտ լանջերին (1700-2200մ) հանդիպող հայկական իժը (*Vipera (Montivipera) raddei*)(VU) և նախալեռնային գոտում հանդիպող՝ միջերկրածովային կրիան (*Testudo graeca*)(VU):

Նախալեռնային և լեռնային գոտու քսերոֆիլ քարքարոտ բիոտոպներում բավական հաճախ հանդիպող տեսակներից են կովկասյան ագաման (*Laudakia caucasia*), ադրբեջանական ժայռային մողեսը (*Darevskia raddei*), զոլավոր մողեսը (*Lacerta strigata*), լեռնատափաստանային գոտում՝ միջին մողեսը (*Lacerta media*), չոր տափաստաններում, թփուտային մացառուտներում, նոսրանտառներում՝ դեղնափորիկը (*Pseudopus apodus*), օձերից՝ որդանման կույր օձը (*Typhlops vermicularis*), վզնոցավոր էիրենիսը (*Eirenis collaris*), հայկական էիրենիսը (*Eirenis punctatolineatus*), կարմրափոր սահնօձը (*Hierophis schmidtii*), արևմտյան վիշապիկը (*Eryx jaculus*): Ջրածահճային և գետերի ափամերձ տեղամասերում հազվադեպ չեն սովորական լորտուն (*Natrix natrix*) և ջրային լորտուն (*Natrix tessellata*): Սողուններից արգելոցի նախալեռնային քարքարոտ կամ կավային տեղամասերում, քսերոֆիտներով ծածկված քարքարոտ լանջերին հանդիպում են նաև շերտավոր մերկաչքը (*Ablepharus bivittatus*), լայնատերև, խառը անտառներում, անտառեզրին, բացատներում՝ ջարդվող իլիկամողեսը (*Anguis fragilis*): Անտառի վերին և լեռնատափաստանային գոտու քարքարոտ զառիվայրերի վրա հանդիպում են բազմագույն (*Hemorrhois ravergeri*) և քառաշերտ (*Elaphe sauromates*) սահնօձերը: Արգելոցում գրեթե ամենուր լայն տարածված է Հայաստանի ամենաթունավոր օձը՝ գյուրզան (*Vibera (Macrovipera) lebetina*):

Վերին լեռնատափաստանային գոտու որոշ տեղամասերում հանդիպում են տարբեր լանդշաֆտային գոտիներին բնորոշ այնպիսի տեսակներ, ինչպիսին են հայկական իժը, գյուրզան, քառաշերտ և կարմրափոր սահնօձերը, մողեսաօձը և այլն: Այս հանգամանքը մեծ հետաքրքրություն է ներկայացնում էկոլոգիական հարմարողականության հարցերը պարզաբանելու տեսանկյունից:

Թռչուններ

Թռչունների ֆաունայում հայտնի են 141 տեսակներ և հիմնականում ներկայացված են անտառային տեսակներով: Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված տեսակներից առաջին հերթին պետք է նշել վայրի հնդկահավը (ուլար) (*Tetraogallus caspius*), կովկասյան մարեհավը (*Tetrao mlokosiewiczzi*), գառնանգղը (*Gypaetus barbatus*): Արգելոցի վերին անտառային գոտում հանդիպում է սպիտակագլուխ անգղը (*Gyps fulvus*):

Սահմանափակ տարածքներ են զբաղեցնում անդրկովկասյան փասիանը (*Phasianus colchicus*)(DD), թուրաջը (*Francolinus francolinus*), շիկապոչ քարաթռչնակը (*Oenanthe xanthopyrma*), մեծ ենթարծիվ (*Aquila clanga*)(VU) և այլն, թվով ավելի քան 50 թռչնատեսակներ:

Ժայռային ելքերով և քարքարոտ զառիվայրերով ենթալայան մարգագետիններում ոչ մեծ քանակով բնակվում է վայրի հնդկահավը (*Tetraogallus caspius*): Անտառային տափաստաններում և թփուտային մացառուտներում լայն տարածում ունի մոխրագույն կաքավը (*Perdix perdix*): Քարակաքավները (*Alectoris chukar*) հաճախ են հանդիպում կիսաանապատների, լեռնային տափաստանների և մարգագետինների ժայռոտ բիոտոպներում: Բարձրախոտ մարգագետիններում բույն է դնում լորը (*Coturnix coturnix*):

Թռչունների բազմաթիվ տեսակների կարելի է հանդիպել անտառապատ տարածքներում, ինչպես նաև քարքարոտ վայրերում, մարգագետիններում և մշակված տարածքներում:

Անտառապատ տեղանքներում հիմնականում հանդիպում է անտառաբուն (*Strix aluco*) և ցերեկային գիշատիչների մի քանի տեսակներ, այդ թվում՝ կրետակերը (*Pernis apivorus*), օձակեր արծիվը (*Circaetus gallicus*) (VU), ցախաքլորարոսը (*Accipiter gentilis*) (VU), փոքր ենթարծիվը (*Aquila pomarina*) (VU) և գաճաճ արծիվը (*Hieraaetus pennatus*) (VU): Առավել բարձր գոտիներում՝ գիհու թփուտներում, կարելի է հանդիպել խայտաբղետ նրբագեղիկին (*Prunella ocularis*), իսկ որտեղ հանդիպում են նաև կեչին և արոսենին, բնակվում է կովկասյան մարեհավը (*Tetrao mlokosiewiczzi*) (VU):

Տեղական փայտփորիկների 6 տեսակներից են վիզզցուկը (*Jynx torquilla*) և սև փայտփորը (*Dryocopus martius*) (VU): Ճնճղազգիների բազմաթիվ տեսակներից առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում ճուռականման շահրիկը (*Sylvia nisoria*) և կիսասպիտակավիզ ճանճորսը (*Ficedula semitorquata*) (DD):

Առավել հարուստ են ժայռոտ և քարքարոտ տեղանքները: Այստեղ, առավել քան Հայաստանի այլ տարածքներում, ներկայացված են վայրի հնդկահավը (*Tetraogallus*

caspius) (VU), ալպիական ճայր (*Pyrrhocorax graculus*) (EN) և կարմրաթև մագլցողը (*Tichodroma muraria*) (DD), ինչպես նաև մորուքավոր անգղը (*Gypaetus barbatus*) (VU), քարարծիվը (*Aquila chrysaetos*) (VU), սապասնը (*Falco peregrinus*) (VU), բվեճը (*Bubo bubo*) (VU), ալպիական նրբագեղիկը (*Prunella collaris*), խայտաբղետ քարակեռնեխը (*Monticola saxatilis*) և ձյան ճնճղուկը (*Montifringilla nivalis*):

Չորասեր բուսականության զարգացման գոտիներում հիմնականում բնակվում են ճնճղազգիների ներկայացուցիչներ, այդ թվում՝ կարմրաթև ոսպնուկը (*Rhodopechis sanguineus*), իսկ ավելի ցածր գոտիներում նկատվող սողունների առատությունը գրավում է օձակեր արծիվին (*Circaetus gallicus*) (VU), եվրոպական ճնճղաճուռակին (*Accipiter brevipes*) (VU) և այլ ցերեկային գիշատիչներին:

Կաթնասուններ

Կաթնասունների ֆաունան ներկայացված է 37 տեսակներով: Կաթնասունների ֆաունայի կազմի մեջ մտնում են միջատակերների 3 տեսակ (կարգ Insectivora), ձեռքաթևավորների 6 տեսակ (Chiroptera), նապաստակների 1 տեսակ (Lagomorpha), կրծողների 15 տեսակ (Rodentia), գիշատիչների 9 տեսակ (Carnivora) և կճղակավորների 3 տեսակ (Artiodactyla), որը կազմում է հանրապետության կաթնասունների (83 տեսակ) մոտ 35%-ը:

Լայնատերև խիտ անտառները, առանձին ժայռային ցցվածքները, արագընթաց գետակներով նեղ, խորը կիրճերը, խոնավ բացատները, քարքարոտ, զառիվայր լանջերը լավ ապաստարան են հանդիսանում այնպիսի խոշոր կաթնասունների համար, ինչպիսիք են գորշ արջը (*Ursus arctos*), եվրոպական լուսանը (*Lynx lynx*), եվրոպական անտառային կատուն (*Felis silvestris silvestris*), այծյամը (*Capreolus capreolus*), վայրի խոզը (*Sus scrofa*), գայլը (*Canis lupus*), աղվեսը (*Vulpes vulpes*), գորշուկը (*Meles meles*), տափաստանային կատուն (*Felis silvestris ornata*), անտառային կատուն (*Felis silvestris silvestris*), քարակզաքիսը (*Martes foina*), եվրոպական նապաստակը (*Lepus europaeus*) և աքիսը (*Mustela nivalis*): Բավական հաճախ են հանդիպում ՀՀ Կարմիր գրքում գրանցված հնդկական մացառախոզը (*Hystrix indica*) և լայնականջ ոզնին (*Erinaceus (Hemiechinus) auritus*): Տարածաշրջանի անտառներում և բաց չորային լանջերին սովորական հանդիպող կաթնասուններից են սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), ձնային դաշտամուկը (*Chionomys nivalis*), անդրկովկասյան կուրամկնիկը (*Ellobius lutescens*), մակեդոնական մուկը (*Mus macedonicus*), աքիսը (*Mustela nivalis*), քարակզաքիսը (*Martes foina*) և սպիտակակուրծք (արևելաեվրոպական) ոզնին (*Erinaceus concolor*):

Անտառի վերին սահմանում, լեռնատափաստանային սարահարթերի զառիվայրերի վրա հազվադեպ են հանդիպում լուսանը (*Lynx lynx*) և ավելի հազվադեպ կովկասյան ընձառյուծը (*Panthera pardus caucasica*), որը ընդգրկված է Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ, IUCN) Կարմիր ցուցակում:

Յածրադիր չորասեր տարածքներին բնորոշ են շնագայլը (*Canis aureus*) և եղեգնակատուն (*Felis chaus*): Տափաստաններում գրանցվում են դաղստանի

դաշտամուկը (*Microtus daghestanicus*) և խայտաքիսը (*Vormela peregusna*): Ջրի մոտ բնակվում են ջրային դաշտամուկը (*Arvicola amphibius*), Շելկովնիկովի կուտորան (*Neomys teres* = *N. schelkovnikovi*) և ջրասամույրը (*Lutra lutra*):

ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված են կովկասյան ընձառյուծը (EN), խայտաքիսը, բեզուարյան այծը (VU), փոքրասիական համատերը, հարավային պայտաքիթ չղջիկը և ջրասամույրը (NT):

ՀՀ Կարմիր գրքում նշված են կովկասյան ընձառյուծը (CR), Շելկովնիկովի կուտորան, ջրասամույրը, լայնականջ ոզնին (EN), քարարծիվը, հնդկական մացառախոզը, հարավային պայտաքիթ չղջիկը, ասիական լայնականջ չղջիկը, սովորական երկարաթև չղջիկը, անտառակատուն, խայտաքիսը, գորշ արջը և բեզուարյան այծը (VU): Էնդեմներն են անդրկովկասյան կուրամկնիկը (Անդրկովկասի էնդեմ), դաղստանի դաշտամուկը, դեղնակուրծք մուկը, Շելկովնիկովի կուտորան, Ռադդեի, Սատունինի և Վոլնոխիսի գորշատամները (Կովկասի էնդեմներ):

Անտառտնտեսության տարածքում կենսաբազմազանությանը սպառնացող հիմնական վտանգներն են.

- Ապօրինի անտառհատումները, որոնք հանգեցնում են բնական էկոհամակարգերի դեգրադացիային և կենդանիների ապրելավայրերի կրճատմանը ու կորուստին;
- Կենդանիների ապօրինի արածեցումը անտառային տարածքներում, որը բացասաբար է ազդում անտառների վրա, հատկապես համայնքամերձ անտառներում ընտանի կենդանիների արածեցումը լուրջ խոչընդոտ է անտառի բնական վերականգնման համար;
- Բույսերի չհամակարգված հավաքը և կենդանիների որսը, որը կրճատում է տեսակների պոպուլյացիաները;
- Մեծ թեքությունների վրա գտնվող ատնառների էրոզիան, հատկապես հարավային դիրքադրության լանջերին: Անտառտնտեսության անտառների մոտ 45%-ը տեղաբաշխված են 30° և բարձր թեքության լանջերին: Այդ անտառներում առավել արտահայտված են էրոզիոն գործընթացները, իսկ բնական վերականգնումն անբավարար է:
- Արոտավայրերի և խոտհարքների ոչ ճիշտ կառավարումը՝ գերօգտագործումը կարող է բացասաբար ազդել սերմնային ինքնավերականգնման վրա (անտառային բացատներում), ինչպես նաև հանգեցնել էրոզիայի ակտիվացմանը, հատկապես մեծ թեքություն ունեցող լանջերի վրա;
- Անտառային հրդեհները մնում են վտանգի գործոն և կարող են բացասական ազդեցություն ունենալ անտառների և կենսաբազմազանության վրա;
- Օտարածին ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տարածումը, որը կարող է անկանխատեսելի ազդեցություններ ունենալ բնական էկոհամակարգերի վրա;
- Կլիմայի փոփոխությունը՝ ջերմաստիճանի բարձրացման և խոնավության նվազման միտումները կարող են բացասաբար ազդել անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա:

Բաժին 4. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Անտառային էկոհամակարգերի զարգացման բնականոն հաշվեկշիռն ապահովելու նպատակով՝ հաշվի առնելով անտառկազմող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկությունները, ներկա անտառշինությունը իրականացվել է հիմք ընդունելով հատման հասակների հետևյալ դասակարգումն՝ ըստ 2005թ. ընդունված անտառային օրենսգրքի (Աղյուսակ 9):

Աղյուսակ 9. Անտառի պաշտպանական կատեգորիաները և ըստ գերակշռող ծառատեսակների հատման տարիքները

№	Ծառատեսակի անվանումը	Հասակային դասի տևողությունը	Անտառի կատեգորիան ըստ նշանակության		
			Արտադրական	Պաշտպանական	Հատուկ
1	Սոճի	20	121	141	161
2	Կաղնի սերմնային	20	161	181	201
3	Հացի, թեղի, թխկի	20	121	141	161
4	Ընկուզենի հունական	20	141	161	181
5	Բոխի սերմնային	20	81	101	121
6	Կաղնի շիվային	10	61	71	81
7	Լորենի	10	91	101	111
8	Կեչի	10	61	71	81
9	Կաղամախի, ուռենի, բարդի	10	41	51	71
10	Բոխի շիվային և այլ ցածրաբուն տեսակներ	10	61	71	81
11	Տանձենի, Խնձորենի	20	101	121	141

4.1 Անտառշահագործման և փայտամշակման բնութագիրը

Անտառտնտեսությունում հատուկ անտառպատրաստման արտադրություն և անտառհումքային բազաներ չկան:

Բնափայտի պատրաստումը կատարվում է՝

- հատման նշանակված կանգուն ծառերի հատում բենզասղոցով,
- շինափայտի, վերամշակման ենթակա փայտի և վառելափայտի առանձնացում և կուտակում անտառում,
- անտառից տեղափոխում մեքենայի բարձման հարթակ տրակտորով կամ հատուկ տեխնիկայով,
- բարձումը և բեռնաթափումը կատարվում է ձեռքով:

Անտառտնտեսությունում անտառանյութի մթերումը կատարվում է պայմանագրային և ինքնապատրաստման եղանակով՝ գնորդների կողմից:

4.2 Բնափայտային անտառօգտագործում

Անտառտնտեսությունում 2008–22թթ բնափայտային անտառօգտագործման ընտհանուր ծավալը կազմել է 56179,60խտմ³, որից վառելափայտի ծավալը՝ 54480,48խտմ³, նույն թվում կանգունից 52399,62խտմ³, թափուկից՝ 2080,86խտմ³: Շինափայտի ընդհանուր ծավալը կազմել է 1699,123մ³, ամբողջությամբ կանգունից:

4.2.1 Անտառվերականգնման հատումներ

Նախորդ կառավարման պլանով 2008-2017 թվականների համար անտառվերականգնման հատում նախատեսվել է միայն Առաջաճորի անտառպետությունում, բոխու գերակշռությամբ ծառուտներում ընդհանուր 42,9 հեկտարի վրա, հատման նախատեսված պաշարը՝ 1334խտմ³, իրացման ենթակա պաշարը 1174խտմ³ (88%), շինափայտի ելույթը՝ 149մ³ (12,7%): 2008-2022 թվականներին ընդհանրապես չի կատարվել:

2024-2033 թվականների համար նախատեսվում է Առաջաճորի, Արծվանիկի և Ճակատենի անտառպետություններում ընդհանուր 315,3 հեկտարի վրա իրականացնել արտադրական նշանակության հատուն և գերհատուն ծառուտներում անտառվերականգնման հատումներ, հատվածներում ընդհանուր պաշարը 53623խտմ³, որից հատման ենթակա 7469խտմ³ (13,9%), նույն թվում իրացման ենթակա 6565խտմ³ (88%), որից շինափայտը 635մ³ (9,7%): Հատման ամբողջ ծավալը նախատեսվել է իրականացնել միայն բոխու գերակշռությամբ ծառուտներում, շինափայտը ամբողջությամբ պատկանում է 3-րդ ապրանքային դասին (Աղյուսակ 10):

Աղյուսակ 10. Ամփոփագիր անտառվերականգնման հատումների հաշվարկային ծավալներ

Անտառպետություն	Քառակուսու №	Հատվածի №	Մակերեսը, հա	Լանջի կողմնադրություն, թեքություն, °	ԾՄԲ	Ծառուտի կազմը	Բոնիտետը	Լրիվությունը	Տարիքը	Մատղաշի քանակություն/բառձո	Հատվածի պաշարը, խտ մ ³	Հատման համար նախատեսվող պաշարը, խտմ ³	Իրացվող	Շինափայտ	Վառելիփայտ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Առաջաճորի	7	10	1,4	Հս-Ամ 10	1460	7բ3կ+հց	4	0,7	85		237	36	32	3	29
	7	23	10,3	Հվ-ամ 30	1360	7բ2կ1հց+թխ+տձ+թղ	4	0,6	85	8000	1494	160	140	14	126
	20	14	4,8	Հս-ալ 30	1475	10բ+կ+թխ	4	0,8	90		1008	205	180	18	162
	21	11	3,2	Հս-Ամ 25	1400	10բ+հց	3	0,7	90		582	58	51	5	46
	24	4	8,4	Հս-Ամ 30	1325	8բ1կ1թխ	4	0,7	90		1302	130	114	11	103
	22	20	2,9	Հս-Ալ 25	1625	7բ2կ1թխ	4	0,7	110		615	91	80	8	72
	22	25	6,8	Հս-Ալ 20	1625	7բ2կ1թխ	3	0,7	110		1544	154	135	13	122
	23	38	3,8	Հս-Ամ 30	1550	10բ+կ+թխ+հց	3	0,8	90		859	170	150	15	135
	24	26	2,4	Հս 30	1530	9բ1կ+թխ	3	0,7	110		545	74	65	6	59
	24	27	6,1	Հս-Ալ 30	1550	8բ2կ	4	0,6	85	8000	738	76	66	6	60
	30	18	28,3	Հվ 30	1575	6բ2կ1թխ1հց+տձ	4	0,8	90		5037	760	670	67	603
43	8	5,4	Հս 25	1625	7բ2թխ1կ	3	0,7	90		1177	118	104	10	94	

Անտառապետություն	Քառակուսու №	Հատվածի №	Մակերեսը, հա	Լանջի կողմնադրություն, թեքություն, °	ԾՄԲ	Ծառուտի կազմը	Բունիտետը	Լրիվությունը	Տարիքը	Մատղաշի քանակություն/բառձո	Հատվածի պաշարը, *խտ մ ³	Հատման համար նախատեսվող պաշարը, հատմ ³	Իրացվող	Շինակալտ	Վառելակալտ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
	43	14	3,2	Հս-Ամ 30	1615	7բ2կ1թխ	4	0,7	90		730	73	64	6	58
Ընդամենը			87								15868	2105	1851	182	1669
Արձվանիկի	9	12	3,3	Հս-25	1440	7բ2կ1հց	3	0,5	90	8000	465	50	44	4	40
	10	8	8,3	Հս-30	1470	4կ4բ1թխ1հց	3	0,7	170		1925	200	176	17	159
	10	34	0,7	Հր-ամ30	1550	7բ2կ1հց	3	0,6	90	8000	127	15	13	1	12
	11	12	8,9	Հս-ամ30	1425	6բ3կ1հց	4	0,5	90	8000	1166	120	106	10	96
	11	14	2,9	Ամ-30	1550	8բ2կ+թխ	3	0,6	90	8000	528	448	394	40	354
	12	6	5,2	Հս-30	1400	6բ2կ1հց1թխ	4	0,6	90	8000	820	100	88	8	80
	12	15	6,7	Հս-30	1450	7բ2կ1հց	3	0,6	90	8000	1140	120	106	10	96
	12	39	9,1	Հս-ալ25	1700	7բ1կ1հց1թխ	3	0,7	90		1930	200	176	17	159
	14	14	4,3	Հս-30	1550	6բ3կ1թխ	3	0,6	90	8000	353	80	70	7	63
	16	9	8,7	Հս-15	1350	7բ2կ1թխ+հց	3	0,5	90	8000	1314	200	176	17	159
	19	21	4,7	Հս-20	1625	6բ2կ1թխ+հց	4	0,6	110	8000	855	100	88	8	80
	19	26	4,7	Հս-ամ25	1700	6բ3կ1հց	4	0,7	110		996	150	132	13	119
	20	36	1,8	Հս-25	1625	7բ2կ1թխ	3	0,6	90	8000	306	40	35	3	32
	20	47	1,8	Ալ-15	1525	8բ2կ+թխ	3	0,6	90	8000	306	40	35	3	32
	23	34	3,1	Արլ-30	1625	6բ2կ1թխ1հց	4	0,6	90	8000	490	80	70	7	63
	26	17	7,7	Հս-ամ15	1350	7բ2կ1թխ	4	0,6	100	8000	1230	210	185	18	167
26	22	9,8	Հս-ամ30	1400	8բ2կ+հց	3	0,6	90	8000	1666	250	220	22	198	
31	7	3,5	Հս-ալ30	1575	7բ2կ1թխ	4	0,6	90		508	100	88	8	80	
Ընդամենը			95,2								15187	2353	2070	199	1871
Սյունիքի	6	11	3,7	Հվ-Ալ 20	1730	7կ3բ	4	0,6	90	8000	629	63	55	5	50
	9	13	1,7	Հվ-ամ 20	1450	5բ3կ2թխ	4	0,6	90	8000	247	27	24	2	22
	9	14	1,1	Հվ-ամ 25	1400	6բ3կ1թխ	4	0,6	90	8000	174	22	19	2	17
	9	16	1,6	Հվ-ամ 20	1360	6կ5բ	4	0,5	160	8000	213	24	21	2	19
	32	18	7,9	Հվ-ամ 20	1300	7բ2կ1թխ	4	0,6	110	8000	1501	150	132	13	119
	32	28	1	Հս-Ալ 20	1345	8բ2կ+թխ	4	0,6	110	8000	180	25	22	2	20
	37	7	9,9	Հս-Ալ 25	1275	6բ2կ2թխ	4	0,6	150	8000	1782	180	158	15	143
	37	24	2,4	Հս-Ալ 20	1225	5կ5բ	4	0,6	90	8000	408	40	35	3	32
	37	25	9,8	Հս-Ալ 20	1250	7բ2ղ1թխ	4	0,6	110	8000	1764	180	158	15	143
	49	25	7,7	Հս-Ալ 20	1160	6բ2կ1թխ1հց	4	0,6	130	8000	1309	140	123	12	111
	52	3	4,2	Հս-Ամ 25	1255	7բ3կ+թխ	4	0,7	110		756	75	66	6	60
	52	4	1,4	Հս-Ամ 25	1235	8Բ1Կ1ԹԽ	4	0,7	110		252	35	30	3	27
	52	25	4	Հս-Ամ 25	1070	8Բ1Կ1ԹԽ	4	0,6	90	8000	680	68	60	6	54
	53	41	1,8	Հս-Ամ 20	1185	7Բ2Կ1ԹԽ	4	0,6	90	8000	306	32	28	2	26

Անտառապետություն	Քառակուսու N ^o	Հատվածի N ^o	Մակերեսը, հա	Լանջի կողմնադրություն, թեքություն, °	ԾՄԲ	Ծառուտի կազմը	Բունիտետը	Լրիվությունը	Տարիքը	Մատղաշի քանակություն/բառձոն	Հատվածի պաշարը, *խտ մ ³	Հատման համար նախատեսվող պաշարը, հատմ ³	Իրացվող	Շինափայտ	Վառելափայտ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Ընդամենը			58,2								10201	1061	931	88	843
Ճակատների	1	7	11,2	Հս-ամ30	1855	8բ2կ	3	0,8	80		1994	400	352	35	317
	1	20	11,3	Ալ-30	1830	6բ2կ1թխ1հց	4	0,6	90	8000	1638	250	220	22	198
	4	6	6,2	Հս-ալ30	1120	6բ2հց2թխ+թղ	3	0,5	90	8000	936	150	132	13	119
	5	9	3	Հս-ամ30	1250	7բ2թխ1կ	3	0,6	110	8000	582	80	70	7	63
	6	43	1,5	Հս-ալ 25	1305	7բ2կ1հց+թխ	4	0,7	110		318	40	35	3	32
	6	55	8	Ամ-20	1455	7բ2կ1թխ+հց	3	0,6	90	8000	1360	200	176	17	159
	9	1	4,4	Հս-ամ25	1800	7բ2կթխ	4	0,6	110	8000	800	100	85	8	77
	11	2	2,4	Արլ-25	1360	6բ2կ1թխ1հց	3	0,5	110	8000	437	60	53	5	48
	12	19	10,5	Ամ-30	1645	6բ3կ1հց+թխ	3	0,3	110		1018	250	220	22	198
						7բ2կ1հց		0,4	70		934				
	15	14	3,4	Հս-ալ 30	1755	8բ1կ1հց	4	0,6	90	8000	537	100	88	8	80
	16	4	4,3	Հս-ամ20	1165	6բ3կ1թխ+հց	3	0,5	90	8000	606	100	88	8	80
	16	7	5,3	Հս-ալ15	1110	6բ3կ1թխ+հց	4	0,5	90	8000	694	120	106	10	96
19	21	3,4	Հս-ամ20	1135	6բ2կ2հց+թխ	4	0,5	110	8000	513	100	88	8	80	
Ընդամենը			74,9								12367	1950	1713	166	1547
Անտառտնտեսությունում			315,3								53623	7469	6565	635	5390

4.2.2 Խնամքի հատումներ

Համաձայն անտառկառավարման պլանների մշակման հրահանգի՝ խնամքի հատումները նշանակվում են այն բոլոր ծառուտների համար, որոնք անտառագիտական հասկացողությամբ խնամք են պահանջում:

2008-2017 թվականների համար խնամքի հատումներ նախատեսված է եղել ընդհանուր 1934,8 հեկտարի վրա, հատման նախատեսված պաշարը՝ 35183խտմ³. Իրացման ենթակա պաշարը՝ 31600խտմ³, շինափայտը՝ 3658մ³ (11,6%): ՀՀ Անտառային կոմիտեի (ներկայիս Էկոպարեկային ծառայություն) կողմից ներկայացված տեղեկատվության՝ խնամքի հատումներ իրականացվել է՝ ընդհանուր 1430 հեկտարի վրա, նույնպես հատումներ՝ ընդհամենը 6 հեկտարի վրա, մթերված անտառանյութի պաշարը՝ 29125խտմ³, նույն թվում՝ նույնպես հատում, ընդհամենը 6հա, 109խտմ³ պաշարով և անցումային հատում 1424 հեկտարի վրա 29016խտմ³ պաշարով:

2024-33 թվականների համար նախնական ուսումնասիրության արդյունքներով խնամքի հատումներ նախատեսվել են ընդհանուր 538,3հա անտառային

հատվածներում, որոնցում ընդհանուր պաշարը 84826խտմ³, հատումների համար նախատեսած ընդհանուր պաշարը 12535խտմ³, իրացման ենթակա պաշարը՝ 10974խտմ³ (87,5%), որից շինափայտը 750մ³ (6,8%):

Նոսրացման հատումներ նախատեսվել են ընդհամենը 18,2 հեկտարի վրա, նախատեսած պաշարը 288խտմ³, իրացման ենթակա պաշարը՝ 250խտմ³, որից շինափայտը 12մ³ (4,8%):

Անցումային հատումներ նախատեսվել են ընդհանուր 520,1 հեկտարի վրա, հատվածներում ընդհանուր պաշարը 82698խտմ³, հատման նախատեսած պաշարը 12247խտմ³, իրացման ենթակա պաշարը՝ 10724խտմ³ շինափայտը 738մ³ (6,1%):

Ինամքի հատման ծավալում ներառված է նաև տվյալ հատվածներում առկա ցցաչոր և արդեն իսկ նկատելի հիվանդ ծառերը (Աղյուսակ 11):

Աղյուսակ 11. Ամփոփագիր խնամքի հատումների հաշվարկային ծավալների

Անտառապետություն	Քառակուսու №	Հատվածի №	Մակերեսը, հա	Լանջի կողմնորոշում, օ	ԾՄԲ	Ծառուտի կազմը	Բոնիտեսը	Լրիվությունը	Տարիքը	Հատվածի պաշարը, * խտ մ ³	Հատման համար նախատեսվող առաժառակառ հատմ ³	Իրացվող	որից		
													շինափայտ	վառելափայտ	
1	2	3	4	5	6	7	8	9	10	12	13	14	15	16	
Առաջաձորի	Նոսրացման հատում														
	5	15	3,8	Հվ-ամ 5	1850	9բ1հգ+կ+կոս առ ծառ բ,կ	2	0,8	35 110	429 38	43	38		38	
	31	13	3,5	Ալ 30	1425	7բ3կ+թխ+հգ+կոս առ ծառ կ, բ	1	0,8	35 85	567 18	57	51		51	
	31	14	0,9	Հվ-Ալ 30	1425	6բ2կ2հգ+թխ+կոս առ ծառ բ,հգ	2	0,7	35 75	140 9	21	19	2	17	
	Ընդամենը			12,7							1663	173	153	4	149
	Անցումային														
	7	18	1,7	Հվ-ամ25	1375	6կ2բ2թխ+հգ+րի	4	0,8	90	287	36	32	1	31	
	7	19	5,9	Հվ-ամ30	1420	4կ6բ+թխ+հգ+թղ	3	0,7	90	1021	102	88	4	84	
	10	3	1,4	Ամ 25	1450	7բ1կ1թխ1հգ+ րի+թղ+խնձ	3	0,7	45	139	17	15	1	14	
	21	7	1,9	Հս 25	1375	8բ1կ1հգ+տձ+խձ	3	0,7	70	321	32	28	1	27	
	21	8	4,3	Հս-Ալ 25	1360	8բ1կ1հգ+հ+տձ առ ծառ բ,կ	3	0,7	65	727 43	73	64	3	61	
	21	10	1,8	Ալ 30	1325	8բ1կ1հգ+տձ	3	0,7	75	356	35	30	1	29	
	31	8	1,2	Հվ-Ալ 25	1375	7բ2հգ1կ+թխ+կոս առ ծառ բ,կ,հգ	1	0,7	45 115	174 6	25	22	1	21	
	32	6	4,3	Հվ-Ալ 25	1450	7բ3կ+թխ+հգ	4	0,7	55	486	49	42	2	40	
	32	9	14,5	Հվ-ա 30	1425	7բ3կ+թխ	4	0,8	80	2813	420	396	20	376	
	33	3	4,1	Հս 30	1275	7բ2կ1թխ+հգ+տձ	4	0,7	80	636	64	56	3	53	
	33	11	4,3	Հս-Ամ25	1350	6բ3կ1թխ+հգ+տձ	4	0,7	80	606	61	54	3	51	
	43	21	1,7	Հվ-ամ20	1425	5կ5բ+թխ+հգ+տձ	4	0,8	70	264	39	35	2	33	
